# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

93-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 63 (24616), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودوسوم - شماره (٢٤٦١٦) ٦٣ - تکشماره ٢٠٠٠٠ ریال - ٨ صفحه

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

3 ԱՊՐԻԼԻ 2024

آلیک

چهارشنبه – ۱۵ فروردین ۱۴۰۳

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir




Իսլ. յեղափոխութեան առաջնորդ.

## «ՄԵՆՔ ԿԸ ՍՏԻՊԵՆՔ ՈՃՐԱԳՈՐԾ ՍԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՌԵԺԻՄԻՆ ԶՂՋԱԼ ԱՅՍ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»

«ԱԼԻՔ» - Սիրիայում Իրանի հիւպատոսութեան վրայ յարձակման, եւ գեներալ Զահեդիի ու նրա զինակիցների նահատակութեան կապակցութեամբ ցաւակցական ուղերձում, Իսլ. յեղափոխութեան առաջնորդ այաթ. Սէյեդ Ալի Խամենէին ընդգծել է, որ ոճրագործ սիոնիստական ռեժիմը զղջալու է այս եւ նման այլ յանցագործութիւնների համար:

«Իսլամի քաջարի եւ նուիրեալ զօրավար, գեներալ-լէյտենանտ Մոհամմադ Ռեզա Զահեդին, իր մեծանուն ռազմընկերոջ՝ գեներալ Մոհամմադ Հադի Հաջ Ռահիմիի հետ նահատակուեցին օկուպանտ եւ նողկալի սիոնիստական ռեժիմի յանցագործութեան արդիւնքում: Թող Աստծոյ եւ սրբերի ողորմութիւնը լինի նրանց եւ այս դէպքի միւս նահատակների ուղեկիցը, իսկ նզովքը՝ օկուպանտ ռեժիմի ղեկավարութեանը:

Մեր նահատակները ողորմած Աստծուց ստացան իրենց երկարամեայ պայքարի պարգեւը, իսկ այժմ սրբերի շրջանակում օրհնուած են Աստծոյ օրհնութեամբ:

Գեներալ Զահեդին նահատակութեան էր սպասում վտանգի ու պայքարի ասպարէզում, դեռեւս վաթսունականներից: Նրանք ոչինչ չկորցրին եւ ստացան իրենց պարգեւը, սակայն նրանց կորստի վիշտը ծանր է Իրանի ազգի, յատկապէս՝ նրանց ճանաչողների համար:

Չարագործ ռեժիմը պատժելու է մեր քաջարի մարտիկների ձեռքով: Աստծոյ կամքով նրանց պիտի ստիպենք զղջալ այս, եւ նման այլ ոճիրների համար»,- ասուած է Իսլ. յեղափոխութեան առաջնորդի ուղերձում:

## Թեհրանը նախազգուշացրել է Սիրայում Իրանի հիւպատոսութեան վրայ յարձակման հետեւանքների եւ լարւածութեան աճի մասին




«ԱԼԻՔ» - ՄԱԿ-ում Իրանի ներկայացուցչի տեղակալը, յայտարարել է, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը խստօրէն դատապարտում է Իսրայէլի սարսափելի յանցագործութիւնները և տմարդի ահաբեկչութիւնները, այդ թւում՝ Սիրիայում Իրանի հիւպատոսութեան վրայ յարձակումը: Նա զգուշացրել է այս դատապարտելի գործողութեան ծանր հետեւանքների մասին՝ նշելով, որ դա կարող է հանգեցնել տարածաշրջանում լարւածութեան աճի եւ աւելի մեծ հակամարտութիւնների պատճառ դառնալ:

ՄԱԿ-ում Իրանի մշտական ներկայացուցչի տեղակալ Զահրա Էրշադին ելոյթ ունենալով Անվտանգութեան խորհրդի նիստում, ասել է. «Իրանի Իսլամական Հանրապետութիւնը խստօրէն դատապարտում է այդ սարսափելի յանցագործութիւնները եւ տմարդի ահաբեկչական յարձակումները: Իսրայէլի ռեժիմը բացայայտ խախտում է ՄԱԿ-ի կանոնադրութիւնը, միջազգային օրէնքները, ինչպէս նաեւ Սիրիայի Արաբական Հանրապետութեան ինքնիշխանութիւնը, անկախութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը»:

Նա նշել է. «Իսրայէլի ռեժիմի արարքն աւելին է, քան յանցագործութիւն: Այս յանցագործութիւնը եւ ահաբեկչութիւնը բացայայտ անարգանք է միջազգային հանրութեան կողմից ընդունուած սկզբունքի՝ ներկայացուցիչների եւ դիւանագիտական ու հիւպատոսական վայրերի անձեռնմխելիութեան նկատմամբ: Համընդհանուր սկզբունք, որը ճանաչուած, յարգուած եւ ընդունուած է, որպէս միջազգային յարաբերութիւնների հիմնաքարը:

Այս յանցագործութիւնն ակնյայտօրէն խախտում է դիւանագիտական եւ հիւպատոսական անձեռնմխելիութեան հիմնարար սկզբունքը, ինչպէս

(Շար. 8-րդ էջում)

Նախագահ Ռէյիսի.

## «Սիոնիստները թող իմանան, որ նման անմարդկային արարքներ երբեւէ իրենց նենգ նպատակներին չեն հասնելու»

«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ այաթ. Ռէյիսին, հակազդելով սիոնիստական ռեժիմի վերջին ահաբեկչական ոճրագործութիւնը, յայտարարել է. «Սիոնիստները թող իմանան, որ նման անմարդկային քայլերով երբեւէ չեն հասնելու իրենց նենգ նպատակներին, օրէցօր ականատեսն ենք լինելու Դիմադրութեան ճակատի զարգացման, իսկ իր անօրինական էութեան նկատմամբ ազատատենչ ժողովուրդների նողկանքի ու զզւանքի: Նման տմարդի ոճրագործութիւնը անպատասխան չի մնալու»:

Նախագահական կայքէջի համաձայն՝ դոկտ. Սէյեդ Էբրահիմ Ռէյիսին իր յղած ուղերձի ընթացքում դատապարտելով Դամասկոսում Իրանի հիւպատոսութեան շէնքի վրայ յարձակման ընթացքում սիոնիստական ռեժիմի անմարդկային յարձակումը եւ միջազգային օրէնքների բացայայտ խախտումը ասել է. «Սիոնիստները թող իմանան, որ նման անմարդկային գործողութիւններով երբեք չեն հասնելու իրենց չար նպատակներին»: Իր ուղերձի այլ բաժնում Հանրապետութեան նախագահը խստիւ դատապարտելով այդ անմարդկային յարձակումը, դա համարել է միջազգային օրէնքների բացայայտ խախտում, որի հետեւանքով նահատակւել են Իսլամական Իրանի քաջարի զաւակները եւ այդ առիթով վշտակցել է Յեղափոխութեան առաջնորդին, Իրանի ժողովրդին, Իրանի Զինեալ ուժերին եւ նահատակների հարազատներին:



Նախագահը ընդգծել է. «Սիոնիստական օկուպանտ ռեժիմը Դիմադրութեան ճակատի ռազմիկների հաւատքի ու կամքի դիմաց անդադար ձախողումներ ու պարտութիւններ կրելով, փորձում է փրկել իրեն եւ ծրագրել է կոյր ահաբեկչութիւններ, սակայն թող իմանայ, որ նման անմարդկային արարքներ երբեւէ չեն արդիւնաւորւելու»:

Վարդան Ոսկանեան.

## «Դամասկոսում իրանական հիւպատոսութեան վրայ յարձակումն իրականացւել է Բաքւի հետ գաղտնի համակարգմամբ»

(Տես 8-րդ էջում)






Իրանցի փորձագէտների հաւաստմամբ՝

## Թուրքիան ծրագրում է կլանել Արաքսի ջրային պաշարների 83%-ը

«ԱԼԻՔ» - Թուրքիան DAP գերնախագծի աւարտով հնարաւորութիւն կունենայ իր տարածքներից վերահսկել Արաքսի անդրսահմանային ջրբաժանի ջրային ներուժի շուրջ 83%-ը:

Այս կապակցութեամբ գիտահետազօտական յօդւած է հրապարակւել Թեհրանի Պետական համալսարանի «Աբուրէյհան» կոլէջի հանդէսում, որտեղ Սաիդ Նասթարանի-Ամուքիի, Զահրա Քուրեշիի, Հօջաթ Միանաբադիի եւ Աթէֆէ Փարւարեշ-ռիսիի համատեղ ուսումնասիրութեան արդիւնքում

(Շար. 8-րդ էջում)




*«Մուսաս խռովել է ինձանից, որովհետեւ վերջերս բոլոր բառերս ծնւում են յուսալքութիւնից, իսկ անզօրութիւնս անուն ունի՝ ԱՐՑԱԽ:
ԱՐ-ՑԱԽ... ասում են ամենաճիշտ բառերը ծնւում են ցաւից...
Ախր ես տեսել եմ յաղթանակից ծնւած երգերը՝ օրօրոցից... երբ դեռ իմն էր օրօրոցը, քունը, յաղթանակը...»*



**Նանար Պօղոսեան,**
**Արցախահայ գրող, իրաւաբան**

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Սէյրան Օհանեան.

## «Հայ ժողովրդին վախեցնող իշխանութիւն պէտք չէ»



ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան ղեկավար, պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է.

«Ապրիլեան պատերազմը ՀԵՐՈՍԱՄԱՐՏ էր

4 օր, եւ Արցախի պաշտպանութեան բանակը ջախջախեց թշնամու ճակատը յարձակման տարբեր ուղղութիւններում, ձախողեց նրա բոլոր հեռանկարային պլաններն ու նորից ստիպեց թշնամուն խաղաղութիւն մուրալ՝ իհարկէ, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութեան հրամանատարութեամբ եւ հազարաւոր կամաւորականների ամուր աջակցութեամբ:

Յաւերժ փառք այն հերոսներին, ովքեր Արցախեան առաջին պատերազմից մինչեւ այսօր իրենց կեանքն են նուիրել յանուն Մայր հողի:

Ու թէեւ այսօր օրինական ստեղծուած Արցախի Հանրապետութիւնն ամբողջովին հայաթափուած յանձնուած է, եւ Արցախի ժողովրդի կողմից օրինական ընտրուած ռազմաքաղաքական ղեկավարութիւնը գտնւում է Ադրբեջանի բանտերում, իսկ Հայաստանի իշխանութիւնը վախեցնում է ժողովրդին պատերազմով, հայը չունի բարոյական նկարագիր, բարոյական իրաւունք իր հող հայրենին յանձնելու: Քաւ լիցի: Հայ ժողովուրդը չի տենչում պատերազմ, բայց եւ պատերազմից չի վախենում: Հայ ժողովրդին վախեցնող իշխանութիւն պէտք չէ:

Միայն ազգային ուժերի առաջնորդութեամբ կարող ենք պայքարել ու ապրել՝ յանուն հայկական Արցախի, Հայաստանի»:

---

Վարուժան Գեղամեան.

## «Ապրիլեանը յաղթել ենք, ու էլի կը յաղթենք: Թշնամին դա գիտի, դրա համար էլ յամառ պայքարում է մեր դէմ»

Թուրքագէտ Վարուժան Գեղամեանը Telegram-ի իր էջում գրել է.

«2017 թ. մարտին մենք՝ տեղեկատուական դաշտի մի քանի հայ ներկայացուցիչներով արտասահմանցի բլոգերների հետ Թալիշում էինք: Այդ այցից շուրջ մէկ տարի առաջ՝ 2016-ի ապրիլի 2-ին թշնամական Ադրբեջանը լայնամասշտաբ յարձակում էր սկսել՝ փորձելով պատերազմով գրաւել Արցախը, սակայն լիարժէք տապալուել էր:



«Ապրիլեան պատերազմ» անունը ստացած քառօրեայ կռիւներում պետութիւնը՝ բանակն ու թիկունքը ներառեալ, գործեց ինչպէս յարկն է, վտանգը չէզոքացուեց, իսկ մեր բանակցային դիրքերն էլ աւելի ամրապնդուեցին:

Սակայն այդ մասին հայ հասարակութիւնը չիմացաւ, որովհետեւ մեր երկրի ներսում գործող օտարերկրեայ գործակալները քարոզում էին, որ պարտուել ենք, որ «տղերքը բահով էին կռւում», որ «դէ սաղ նախապէս պայմանաւորուած էր», իսկ ոմանք էլ «հող յանձնելու դէմ պայքարի» անուան տակ սկսեցին քայքայել պետութիւնը՝ անունը դնելով քաղաքականութիւն:

Իսկ ժողովուրդը հաւատաց դրան, թէեւ հէնց ինքն էր նոր կերտել այդ յաղթանակը:

Շատերս, ինչպէս որ ես, այն ժամանակ կարծում էինք, որ մեր խնդիրն է առաջին հերթին միջազգային լսարանին ճիշտը քարոզել Արցախի մասին: Ու էենց այդ նպատակով էլ այցելել էինք Թալիշի յաղթական դիրքեր:

Սակայն իրականում երկրի ներսում՝ հայ հասարակութեանը մենք բաւականաչափ չէինք բացատրում տեղի ունեցողն ու դրա կարեւորութիւնը: Այդ թերութեան ազդեցութիւնը երեւաց հետագայ տարիներին ու երեւում է նաեւ հիմա:

Արցախում՝ ցեխոտ, խոնաւ դիրքերով անցնելուց ու զինուոր տղերքի հետ ճաշարանում հաց ուտելուց յետոյ ես վստահ էի, որ բանակին կոտրել չի լինի: Չնայած էդ պայմաններին՝ տղերքի դէմքին կար մենակ յաղթանակի զգացում, որովհետեւ մի տարի առաջ իրենք նորից յաղթել էին:

Էդ օրուանից նաեւ յստակ մի բան հասկացայ. ով խօսում է բանակի դէմ, ըստ էութեան՝ պետութեան թշնամի է, կապ չունի, թէ ինչպէս է այդ ամէնը ներկայացնում: Նոյնն է նաեւ այսօր:

Ապրիլեանը յաղթել ենք, ու էլի կը յաղթենք: Թշնամին դա գիտի, դրա համար էլ համառ պայքարում է մեր դէմ»:

---

## «Ինքը չի՞ գնացել գիւղ, ասել յանձնելու ենք, ընդդիմութիւննն է ասե՞լ. հիմա ո՞վ է մանիպուլացնում»



Արձագանգելով Նիկոլ Փաշինեանի յայտարարութեանը, թէ ընդդիմութիւնը մանիպուլացնում է Տաւուշից գիւղերի յանձնման մասով, դրանք ադրբեջանական են, ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գառնիկ Դանիէլեանն ասաց. «Ընդդիմութիւնը ոչ մի բան չի մանիպուլացնում»:

«Մենք ինֆորմացիա ենք ստացել, որ բանակցում են, իրենք եկել են, մեր աչքերի մէջ նայել են, ասել են չենք բանակցում: Գնացել գիւղերում էլ են նոյն բանն ասել: Ասել են ձեռքներս կը կտրենք, հող չենք տայ, ընդդիմութիւնը մանիպուլացնում է, սուտ է ընդդիմութիւնն ասում: Բայց 15 օր առաջ եկել է գիւղում կանգնել, ասել ժողովուրդ ջան՝ պէտք է յանձնի: Մինչեւ էդ ասում էր՝ մանիպուլացնում են, ընդդիմութիւնը: Եկել է գիւղի մէջ, հաւաքել ժողովրդին, ասել գիւղերը յանձնուելու են: Գիւղացիք էլ ասել են՝ ո՞նց ես յանձնում, բա ընտրարշաւի սկզբում ասել ես տենց բան գոյութիւն չունի: Հիմա ընդդիմութիւնն է մանիպուլացնո՞ւմ:

Եկել է էդ մարդկանց ասել է դա յանձնում ենք, տալիս ենք, էլ ընդդիմութեան մոլորեցնելը էդտեղ որտե՞ղ է: Ես ուզում եմ հասկանալ՝ ընդդիմութիւնը որտե՞ղ է մոլորեցնում: Ինքը չի՞ գնացել գիւղ՝ ասել, ե՞ս եմ ասել: Ես չեմ, չէ՞, ասել, ինքն է ասել իր բերանով՝ 4-ը կը տանք, յետոյ կը գնանք սպասենք, թէ Ադրբեջանն ինչ պահանջներ է՝ ներկայացնում: Մարդիկ հարց են՞ տուել՝ 4-ը տալուց յետոյ երաշխիք կա՞յ, ասել է՝ չէ, երաշխիք չկայ: Էլ ընդդիմութիւնը որտե՞ղ է մանիպուլացնում: Թող գնայ էդ մարդկանց պատասխան տայ»,- ասաց Գառնիկ Դանիէլեանը:

«Էդ մարդիկ հարցրել են՝ Վերին Ոսկեպարում պահանջ կա՞յ ներկայացուած. ասել է՝ այո, կայ էդ պահանջը: Վերին Ոսկեպարը որ քարտէզը բացում են, ցանկացած հեռուստադիտող թող բացի նայի Վերին Ոսկեպարը ում սահմանակիցն է. Լոռու մարզի: Հիմա որ Պետրոս Ղազարեանն իր կաբինետում նստած էդ տեղերը չգիտի, չի կարողանո՞ւմ քարտէզը բացի, որ իր եթերում էլ աւել-պակաս խօսում՞ է: Վերին Ոսկեպարի սահմանակիցը ո՞րն ա, այ տղայ, Լոռու մարզը չի՞: Ինչո՞ւ էք մանիպուլացնում հասարակութեանը: Գազամուղը որտեղո՞վ է անցնում, մեր տան մօտո՞վ. չէ, էդ հաստատ: Էլի կասեն ընդդիմութիւնը մանիպուլացնում է, ի՞նչն է մանիպուլացնում»,- յաւելեց տաւուշցի պատգամաւորը:

**Yerevan.today**




## ՀԵՐՈՍԸ

«Հրամանատար, մենք այս դիրքը արիւնով պահեցինք, ով յանձնի այն, ես նրա…»,- Արցախի հերոս Ռոբերտ Աբաջեան

---

## ԽԵՂԿԱՏԱԿԸ

Առանց մեկնաբանութեան...




Ոսկեպարցիները՝ Փաշինեանին.

## «Կը տուժի սահմանամերձ 9 համայնք, կը կորցնենք Իջեւան-Նոյեմբերեան մայրուղին, հակառակորդի համար ազատ ճանապարհ կը բացուի դէպի Լոռի»

(Տես 7-րդ էջում)



# Տաւուշում փորձում են մարդկանց վախեցնել, գիտեն՝ ժողովուրդն ընդվզելու է



*«Ժամանակ առ ժամանակ ոստիկանական խմբերի թիւը Ոսկեպարում եւ յարակից համայնքներում աւելացնում են»,- այս մասին Yerkir.am-ի հետ զրոյցում ասաց ՀՅԴ Տաւուշի Մարզային կոմիտէի ներկայացուցիչ, ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գառնիկ Դանիէլեանը՝ Տաւուշի Կիրանց գիւղից Ոսկեպար ճանապարհին։*

*Նշենք, մամուլն այսօր գրել է, որ Նիկոլ Փաշինեանի այցից յետոյ ոստիկանական յատուկ խմբեր են գործուղել Ոսկեպար, Բաղանիս եւ յարակից համայնքներ, որոնք ուժեղացուած ծառայութիւն են իրականացնում, յայտնաբերում են լրատուամիջոցներին հարցազրոյց տուած գիւղացիներին, յորդորում այլեւս հարցազրոյցներ չտալ եւ դրանով չշարժել Ալիեւի զայրոյթը։*

*«Խնդիրն այն է, որ երբ դրսից մարդիկ են այցելում գիւղեր, սկսում են այդ մարդկանցով հետաքրքրուել՝ թէ ինչո՞ւ են եկել, նպատակը ո՞րն է, ինչն էլ մարդկանց կաշկանդում է, նեարդայնացնում։ Այսինքն՝ փորձում են նաեւ այդ կերպ մարդկանց մէջ վախ ներարկել։ Հէնց այս պահին Ոսկեպարում կամ միւս գիւղերում ոստիկանական մեծ խմբեր չկան, քանի որ իշխանութիւնն իր գործն աւելի շատ ծածուկ է անում՝ ոչ պաշտօնական խողովակներով, զանգերով եւ այդ կերպ փորձում վախի մթնոլորտ ձեւաւորել։ Իմ կարծիքով՝ այս ամենն արւում է հետագայ հնարաւոր զարգացումների դէպքում մարդկանց վերահսկողութեան տակ պահելու նպատակով»,- նշում է Գառնիկ Դանիէլեանն ու յաւելում. «Մարդիկ հիմա աւելի շատ սպասում են, թէ առաջիկայում ինչ զարգացումներ են լինելու»։*

***-Պարոն Դանիէլեան, ինչպէ՞ս էք վերաբերւում այն փաստին, որ սահմանամերձ բնակավայրերում, սահմանին ԶՈՒ-եր կենտրոնացնելու եւ պաշտպանութիւնն ամրացնելու փոխարէն, օրւայ իշխանութիւնը ոստիկանական տարբեր խմբեր է գործուղում ոչ միայն Տաւուշի սահմանային գիւղեր։ Ահազանգեր կան, որ, օրինակ, պարեկները Արարատի մարզի սահմանային գիւղերում, յատկապէս՝ Երասխում, բնակիչներին աջ ու ձախ տուգանում են զուտ նրա համար, որ մարդն իր բակում, հանրային բացօթեայ տարածքում ծխել է։***

*- Այո՛, մարդկանց տուգանքի մատերիալ սարքելն այս իշխանութեան ձեռագիրն է։ Դեռ ամիսներ առաջ բազմաթիւ տաւուշաբնակներ ինձ էլ էին զանգել ու ասել, որ նման խնդիր կայ. մարդկանց ծխելու, մեքենայի անւադողերի եւ տարբեր այլ պատրւակներով պարեկները մօտենում, տուգանում են։ Մարդիկ ասում են՝ եղբայր, ի՞նչ էք ուզում մեզանից, քիչ է մնում արդէն գիւղում քայլելու, հեռախօսով խօսելու համար տուգանեն։*

***-Ստացւում է՝ սահմանները, սահմանապահ գիւղերի պաշտպանութիւնն ամրացնելու փոխարէն օրւայ իշխանութիւնն իրեն յատուկ ձեռագրով վախի մթնոլորտ է ստեղծում։***

*-Ոստիկանական համակարգին այս ընթացքում լաւ վարձատրել են, այսպէս ասած՝ լաւ աչքով են նայել։ Շատերը զինւորական ծառայութիւնից դուրս են եկել ու մտել պարեկային ծառայութիւն, որովհետեւ պարեկ դառնալը, ցաւօք այսօր, աւելի «պրիստիժնի» է։ Ոստիկանական, պարեկային ծառայութիւնն ուժեղացնում են, քանի որ գիտեն ժողովուրդն ընդվզելու է մի օր, իսկ ոստիկանութիւնն այսօր Նիկոլի իշխանութիւնը պահող միակ յենարանն է։ Այդ յենարանը տարեցտարի ուժեղացնում են, գումար չեն խնայում, հակառակը՝ բանակից տարեցտարի կրճատելու են։ Այո, այսօր մենք այն իրավիճակում ենք, որ մեր պաշտպանական ողջ ներուժը պէտք է կենտրոնացնեն ամրաշինական եւ այլ աշխատանքներ կատարելով, ինչի բացակայութիւնը ժողովրդի մօտ մտավախութիւնների տեղիք է տալիս։*

*Մենք բազմիցս պահանջ ենք ներկայացրել իշխանութիւններին, որ գոնէ գիւղի բնակիչներին զինեն, զէնք տրամադրեն, վարժանքներ իրականացնեն, աշխատեն ժողովրդի հետ, բայց էդ աշխատանքը չկայ։ Մարդիկ նաեւ դրանից են վրդովուած, ասում են՝ մենք պատրաստակամութիւն ենք յայտնում, ինչո՞ւ դուք որեւէ բան չէք անում։*

*Իմ մտավախութիւնը նաեւ այն է, որ իշխանութիւնն իր քարոզիչներով, ինչ-ինչ ուժերի միջոցով, փորձում է համոզել տեղաբնակներին, որ իրենից ոչինչ կախուած չէ, նրանք էդքան էլ մեղաւոր չեն, մեղաւոր են ռուսները, նախկինները, բոլորը, միայն ոչ՝ իշխանութիւնները։ Իշխանական այդ արբանեակների քարոզը վտանգաւոր է, որովհետեւ պարզ ուղղորդուած գալիս են մարդկանց ասում՝ եթէ ձեր տունն էլ անցնի ադրբեջանական վերահսկողութեան գօտի, պետութիւնը կը փոխհատուցի, այսինքն՝ փորձում են մարդկանց փողով գնել, եւ այդ վտանգաւոր միտումը կայ։ Բոլորիս խնդիրն է՝ կարողանանք էնպիսի միջավայր ձեւաւորել, որ այդ ապազգայինը մօտեցումն արմատներ չգցի։*

*Նիկոլ Փաշինեանը խոստովանել է, որ այդ 4 գիւղից յետոյ յաջորդ 4-ն է տալու, էլ ի՞նչ փոխհատուցման մասին է խօսքը, եթէ մարդիկ իրենց հայրենի հողից, տնից-տեղից զրկւում են։ Շատ ենք ասում՝ Տաւուշի ժողովուրդը, այստեղի ժողովուրդը, բայց կարեւոր է հասկանալ, որ այստեղի ժողովրդի հարցը չէ, այս 4 գիւղերով որոշւում է բոլորիս ճակատագիրը, ամբողջ Հայաստանի ճակատագիրը, այսինքն՝ դրանով մեր դարպասները, մեր ընդհանուր տան դռները բացելու ենք թշնամու առջեւ։*

**ՀԵՐՄԻՆԷ ԶԷՅՆԱԼԵԱՆ**

# Բրիւսէլի գրասենեակին կարեւորութիւնը



*Ընթացիկ դէպք մը չէր Հայ Դատի Եւրոպայի յանձնախմբի նոր գրասենեակի բացման հանդիսութիւնը, կիրակի, մարտի 24-ին։ Անիկա տեղի ունեցաւ այնպիսի պահու մը, երբ Հայաստանի իշխանութիւններուն պարտուողական ընթացքն ու դիւանագիտական թեւի իրողական անդամալուծութիւնը բազմաթիւ հարցադրումներու դուռ կը բանայ։*

*Եղածը կարելի չէ դիտել պարզապէս կարմիր ժապաւէնի մը հատումով եւ անոր յաջորդած խօսքերով ու հիւրասիրութեամբ։*

*Գրասենեակին բացումը կը դիտենք ստեղծուած տաժանելի պայմաններուն լոյսին տակ, երբ Հայ Դատը կը շարունակէ ո՛չ միայն ծառայել Հայաստանին ու մեր իրաւունքներուն հետապնդման, այլ ծանր պարտականութիւն մը յանձն առած է՝ պաշտպանելու նա՛եւ հայկական պետականութիւնը։ Պետականութիւն մը, որ կարծէք թէ առանց անկարգելի ձգուած է՝ իյնալու անդունդն ի վար։ Այդ գրասենեակն ալ, յանձին իր ժրաջան աշխատակիցներուն, ոգի ի բռին կը պայքարի ի խնդիր Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան գործին, որ մէկ մասնիկն է մեր Դատին։ Այլ խօսքով, Ինչպէս Հայ Դատի ամբողջ մեքենան, այս մէկն ալ լծուած է երկու ուղղութեամբ պայքարի՝ ներքին, ներհայկական, եւ արտաքին՝ աշխարհի տարբեր պետութիւններու ուղղութեամբ։*

*Ուշագրաւ էր, որ գրասենեակին բացման հանդիսութենէն օր մը ետք, նոյնինքն Հայ Դատի Բրիւսէլի գրասենեակին կազմակերպութեամբ, Բելժիկայի Սենատին մէջ տեղի ունեցաւ «Աշխարհաքաղաքական զարգացումները Հարաւային Կովկասի մէջ. կիզակէտ՝ Հայաստան եւ Արցախ» խորագրով կլոր սեղան-քննարկումը, մասնակցութեամբ բազմաթիւ խորհրդարանականներու, դիւանագէտներու, վերլուծաբաններու, լրագրողներու եւ հիմնարկներու ներկայացուցիչներու։*

*Հակառակ զանգւածային տեղահանութեան՝ բռնագաղթին, հետեւաբար հայութենէ պարպուած ըլլալուն, Արցախը Հայ Դատին համար միշտ ալ խիստ կարեւոր եղած է մեր պատմութեան այժմու փուլին։*

*Մենք, իբրեւ Հայ Դատի ի խնդիր պայքարող հայորդիներ, քաջատեղեակ ենք, թէ թշնամին ինչպիսի՛ հսկայական միջոցներ կօգտագործէ, գումարներ կը հոսեցնէ գրպաններու մէջ, ներգրաւելով բանալի դիրքի վրայ գտնուող ղեկավարներ ու պաշտօնատարներ։*

*Հակառակ այս բոլոր դժուարութիւններուն, մենք՝ Հայ Դատի զինուորագրեալներս, մի՛շտ առաջին գիծի վրայ ներկայ պիտի ըլլանք՝ աննահանջ պաշտպանելու Արցախի շահերը, որ նաեւ հայութեան՝ հայորդիին եւ Հայաստանին շահն է, գործնապէս ճամբայ կը բանայ մեր բոլոր իրաւունքներուն հետապնդման։*

*Բանաստեղծ-երգիչ Ժագ Բրէլի բնութագրումով՝ «տափակ երկիր»-ի մայրաքաղաքը չէ լոկ Բրիւսէլը, որ յաճախ շուքի մէջ մնացած է հարաւի դրացիին՝ Փարիզի շողշողուն լոյսերուն տակ։*

*Այսօր, տասնամեակներէ ի վեր, Եւրոմիութեան մայրաքաղաքն է Բրիւսէլը, նաեւ Ատլանտեան Ուխտի՝ ՆԱՏՕ-ի ընդհանուր կեդրոնատեղին։*

*Այս իսկ պատճառով, խիստ կարեւորութիւն ունի, առաջնահերթութիւն մըն է Հայ Դատի գործօն գրասենեակի մը ներկայութիւնը։*

*Աշխարհի այժմու իրադարձութիւններուն լոյսին տակ, պէտք է տեսնենք, որ շատ աւելի դժուար է Եւրոպայի այս կենտրոնական գրասենեակի եւ ընդհանրապէս աշխարհի այլ ծագերու մէջ գործող Հայ Դատի գրասենեակներուն պարտականութիւնը։*

*Մեզ շրջապատող աշխարհին մէջ, անհամար են փոթորիկները։ Ներ-հայկական դաշտին մէջ, փուլ եկած է հայրենի դիւանագիտութիւնը։ Քանի մը օր առաջ, արտաքին գործոց նախարարութեան մէջ նախապէս գործող տասնեակ մը անհատներ ահազանգ հնչեցուցին, միասնաբար յայտարարութիւն մը լոյս ընծայելով եւ կոչ ուղղելով այլոց, որ միանան այդ բողոքագրին։*

*Արցախը «կուլ տալու» քաղաքականութիւնը իրականացնելէ ետք, Բաքու հիմա սկսած է սուր ատամներով կրծել Հայաստանի սահմանները, իսկ երկրի ղեկին բազմած վարչակազմը կը շարունակէ նահանջելու եւ հայապատկան հողեր յանձնելու քաղաքականութիւնը։*

*Իշխանաւորը կա՛մ կերազէ, կամ ալ հաւատարիմ է ժողովուրդը խաբելու իր վարքագիծին, երբ հաւաստիք կու տայ, թէ նախապայմաններով չի բանակցիր Թուրքիոյ հետ։ Աչք ծակող իրականութիւնը ուրիշ բան կըսէ. Թուրքիա եւ Ատրպէյճան նախապայմաններու երկար ցանկերով նստած են Հայաստանի դիմաց։ Անկարա կրկին ու կրկին յստակացուցած է, որ Հայաստանի հետ խաղաղութեան բանալին՝ Երեւանի կողմէ Ադրբեջանի պահանջներուն ընթացք տալն է, այսինքն, Արցախի խլումէն ետք՝ պէտք է տալ նաեւ «Զանգեզուրի միջանցք»-ը։ Չմոռնանք Տաւուշի գիւղերը, վա՞ղը…։*

*Հուսկ, այս գրասենեակը կը խորհրդանշէ հայ ժողովուրդին տունը, նուիրուած՝ հայ ժողովուրդին անաչառօրէն ծառայողներուն կողմէ։*

*Հաւատարիմ կը մնանք Արցախի, Հայաստանի եւ մեր ժողովուրդի բոլոր շահերու, Դատին պաշտպանութեան նպատակին եւ պիտի շարունակենք յառաջ մղել պայքարը։*

**«Հայրենիք» – Բոստոն Խմբագրական**

# ՔՊ-ին համեմատելը Յիսուս Քրիստոսի հետ կամ գիտակցւած սրբապղծութիւն է, կամ խորը շիզոֆրենիայի դրսեւորում



*Շնորհակալ եմ, որ հաւատացել էք, որ ոչ միայն Յիսուս Քրիստոսը կարող է յարութիւն առնել, այլ նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը։ Այս բարբաջանքն արտաբերել է Նիկոլ Փաշինեանը Արտաշատում սեփական կուսակցականների հետ հանդիպման ժամանակ։*

*Միֆ է, որ նա խնդիրներ ունի Վեհափառի կամ հոգեւորական վերնախաւի հետ, ինչ-որ չափով միֆ է նաեւ, որ Նիկոլ Փաշինեանը խնդիրներ ունի Հայ Առաքելական Եկեղեցու հետ։ Նիկոլ Փաշինեանն իրականում խնդիրներ ունի քրիստոնէութեան ու հաւատքի հետ առհասարակ։*

*Ոչ ոք թող չկարծի, որ նա աթեիստ է։ Իրականում աթեիստները պարզապէս չեն հաւատում արարչագործութեանը, ելակետը համարում են մատերիայի էւոլիւցիան, սակայն երբեք չեն ծաղրում հաւատացեալներին՝ այն մարդկանց, որոնք աշխարհի հիմք են ընդունում Արարումը։*

*Նիկոլ Փաշինեանը նոյնիսկ այլադաւան էլ չէ, որովհետեւ տարբեր կրօններ դաւանող մարդիկ կարող են միմեանց չընդունել, երբեմն ատել, բայց ոչ երբեք ծաղրել։*

*ՔՊ-ին համեմատելը Յիսուս Քրիստոսի հետ, աւելի վաղ իր անձն էր նոյնականացրել Քրիստոսի հետ, կամ գիտակցւած սրբապղծութիւն է, կամ խորը շիզոֆրենիայի դրսեւորում, կամ երկուսն էլ միասին։*

*Ու պատահական չէ, որ նա այդ միտքը կրկնում է երկրորդ անգամ։ Նիկոլ Փաշինեանը հետեւողականօրէն տրորում է բոլոր արժէքները, ազգային, հայրենիք, հաւատք…։ Ընդորում նա դա անում է մշակւած հետեւողականութեամբ։ Առաջին անգամ որեւէ միտք արտաբերում է անմիտ ժպիտով, ու շատերը թիւրիմացաբար այդ միտքն ընդունում են որպէս պահի տակ մոգոնւած բարբաջանք, որպէս հումորից զուրկ մարդու կողմից արւած անյաջող կատակ։ Ու սա հէնց այն թակարդն է, որի մէջ յայտնւել է ողջ ազգն ու հասարակութիւնը, որովհետեւ երբ Նիկոլ Փաշինեանը տեսնում է, որ իր այդ արտաբերանքը չի արժանացել լուրջ դիմադրութեան, նա սկսում է գեներացնել այդ միտքն իր անհայրենիք խմբակի կողմից, ինչն էլ ի վերջոյ ստանում է միս ու արիւն։ Հէնց այս նոյն մեթոդաբանութեամբ նա յանձնեց Արցախը, յարձակւեց Արարատ լեռան, հիմնի, զինանշանի, Հայոց պատմութեան վրա, նոյն մեթոդով յանձնեց Սիւնիքի ու Վայոց Ձորի (Ջերմուկ), նոյն մեթոդով է պատրաստւում յանձնել Տաւուշի տարածքները։*

*Սակայն եթէ Նիկոլ Փաշինեանի հետ ամէն ինչ պարզ է, ապա տարակուսելի է այն մարդկանց կեցւածքը, որոնք հանդուրժում, ոմանք նոյնիսկ ծափահարում են այս կործանարար արտաբերումները (խօսքը նրա «քաղաքական» թիմի մասին չէ, այլ ՄԱՐԴԿԱՆՑ)։*

**(Շար. 5-րդ էջում)**

# ԻՆՉՈ՞Ւ ԷՔ ՈՂՋԻՆ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՄԷՋ ՓՆՏՌՈՒՄ, ՆԱ ԱՅՍՏԵՂ ՉԷ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ



*Կիրակի՝ առաւօտեան, իւղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Յովհաննէսի եւ Յակոբոսի մայրը՝ Մարիամը, ուրիշ կանանց հետ գերեզման են գնում, համաձայն իրենց աւանդութեան, իրենց կրօնական պարտականութիւնը կատարելու խունկ ծխելով իրենց վարդապետի մարմնի վրայ:*

*Գերեզման հասնելիս զարմանքով տեսան մուտքին դրուած քարը գլորուեր էր եւ առաւել զարմանքով նկատեցին, որ Յիսուսի մարմինը չկար: Կանայք մի պահ ապշած միմեանց էին նայում, երբ յանկարծ լուսազգեստ երկու մարդ կանգնեցին նրանց մօտ եւ ասացին, մի քիչ յանդիմանական եւ մի քիչ էլ քաղցրահնչիւն,* ***«Ինչո՞ւ ողջին մեռելների մէջ էք փնտռում: Նա այստեղ չէ, Յարութիւն առաւ»*** *(Ղկ. 24:5-6):*

*Հրեշտակների բարի ու քաջալերական խօսքերը նոր կեանքով, յոյսով ու հաւատքով կերպարանափոխեցին կանանց, ովքեր անմիջապէս վերադարձան եւ առաքեալներին պատմեցին ինչ որ տեսել էին: Առաքեալները մի պահ կասկածամտութեամբ ընկալան կանանց պատմածը, սակայն Պետրոսը անմիջապէս վազելով գերեզման գնաց եւ այն թափուր գտնելով զարմացած վերադարձաւ իր ընկերների մօտ նրանց յայտնելով, որ իսկապէս Տէրը Յարութիւն է առել:*

*Առաքեալները վերջին օրերին ահաւոր դէպքերի ազդեցութեան ներքոյ մոռացել էին իրենց վարդապետի այն խօսքը թէ՝* ***«Մարդու Որդին պէտք է յանձնուէր մեղաւոր մարդկանց ձեռքը, խաչուէր եւ երրորդ օրը Յարութիւն առնէր»*** *(Ղկ. 24:7):*

*Յարուցեալ Տէրը նոյն օրը դէպի Էմմաուս գնացող իր երկու աշակերտներին երեւեցաւ եւ այնուհետ տարբեր առիթներով իր առաքեալներին եւ հաւատացեալներին: Խաչելութեամբ ու թաղմամբ աշակերտների խաւարացած միտքը, յանկարծ պայծառանում է Յարութեան լոյսով ու լուսաւորուած սկսան վերյիշել իր խօսքը՝* ***«Ես եմ լոյսը աշխարհի»*** *(Յհ. 8:12):* ***«Ես եմ Յարութիւնը եւ կեանքը: Ով որ հաւատում է ինձ, թէպէտ եւ մեռնի կ՛ապրի»*** *(Յհ. 11:25):*

*Կեանք ու յաղթանակ շեփորող Քրիստոսի այս խօսքերը դարերով արձագանգեցին սրտէ սիրտ, ճեղքելով անդնդախոր ձորերն ու երկնամերձ գագաթները լեռների, ողջ մարդկութեան յայտարարելով որ* ***«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբըն իւրով մեզ ըզկեանս պարգեւեաց»****: Այո՛, Քրիստոս իր Յարութեամբ մահը նուաճեց մարդկութեան պարգեւելով նոր կեանք:*

*Կատարւում էր պատմութեան մեծագոյն հրաշքը: Քրիստոս իրոդապէս ու վաւերականօրէն Յարութիւն էր առել եւ դրանով հաստատում էր իր խօսքերի, գործերի, հրաշքների, պատգամների ճշմարտացիութիւնն ու վաւերականութիւնը:*

*Քրիստոնէական եկեղեցու մեծագոյն տօնն է Ս. Յարութեան տօնը, որովհետեւ այն Գողգոթայի բարձունքին տեղի ունեցած խաչելութեամբ գոյացած խաւարը միանգամընդմիշտ փարատեց, աշխարհը ողողելով Յարութեան ճառագայթարձակ կենսապարգեւ լոյսով: Այլ խօսքով չարը խափանուեց գերագոյն բարիի յաղթանակով:*

*Քրիստոսի Յարութեան լուսասփիւռ հաւատքով զօրացած առաքեալներն ու աշակերտները անվախօրէն Աւետարանի սերմերը ցանեցին աշխարհով մէկ, որտեղ անոնք մէկին տեղ երեւում, վաթսուն եւ հարիւր տուին: Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ մարդ արարածի կեանքը պայծառակերպուեց եղաւ լեցուն ու լուսասփիւռ.* ***«Ես եկայ որպէսզի կեանք ունենան եւ կեանքը լինի առաւել լեցուն»*** *(Յհ. 10:10):*

*Հայ ժողովուրդը ինք եւս իր կեանքը պտղաբերեց, լուսազարդեց Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ, որի սերմերը Հայաստան աշխարհին էին բերել Յարութեան վկաները՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալները:*

*Քրիստոսի Յարութեամբ զրահաւորուած հայը ապրեց ու ստեղծագործեց ապաւինած Յարուցեալ Փրկչին, որ եղաւ հաշտութեան միջնորդ մարդու եւ Աստծու միջեւ: Առաքեալը ասում է.* ***«Հիմա որ հաւատով արդարացած ենք, այլեւս հաշտուած ենք Աստծու հետ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի միջոցով»*** *(Հռ. 5:1):*

*Հայը Քրիստոսի Յարութեամբ զօրացած պահեց ու աճեցրեց իր քրիստոնէական հաւատը, որի շնորհիւ նա պայքարեց ե՛ւ ներքին ե՛ւ արտաքին թշնամիների դէմ, հաւատարիմ*

**(Շար. 5-րդ էջում)**

# ՄԱՀԻՑ ՓԱԽՈՒՍՏ ՉՈՒՆԵՆՔ, ԲԱՅՑ…



*Յարութեան անզուգական գաղափարի նկատմամբ մեր ունեցած հաւատքը, անփոխարինելի գանձ է: Իւրաքանչիւր մարդու հոգում ծւարած կա՛յ այն, առանց մասնաւոր դիտումի կամ այն յայտնաբերելու յատուկ ճիգի: Կրօնական հաւատալիքներից դուրս եւս, յաւիտենապէս ապրելու ցանկութիւնը, ի՛նք ստիպում է մեզ հաւատալ անդենական կեանքին, որը մարմնաւոր կեանքից շատ աւելի ցանկալի, հոգեկան իրավիճակի հարուստ պատկերացումով է ընդունում իւրաքանչիւր անհատ, ի՛նչ կրօնի հետեւորդ էլ լինի:*

*Մահւան երկիւղը պատեց Յիսուսի աշակերտների սրտերը եւս, որոնք ներկայ էին, ու իրենց մերկ աչքերով տեսնում էին այն, ինչը պատահում էր մեծ Վարդապետին: Նրա կրած չարչարանքը, խաչի վրայ արիւնաքամ լինելը եւ ի վերջոյ հոգին Հօր ձեռքերի մէջ աւանդելը, վստահաբար վախազդու պահեր ստեղծեցին նրանց սրտերում:*

*Աշակերտների դասի ամենատարեցը՝ Պետրոս Առաքեալ, երեք անգամ ուրացաւ իր մեծ Վարդապետին, ասելով որ չի՛ ճանաչում Նրան: Այսօր քրիստոնեաների շարքերում չկա՞ն Նրան ուրացողներ: Հաւատացէ՛ք, որ ոչ միայն երեք, այլեւ գուցէ երեքհարիւր անգամ ուրացողներ կան, որոնք ի ժամու եւ ի տարաժամու ուրանում են Քրիստոսին, ասելով որ բնա՛ւ չեն լսել Նրա անունը…:*

*Ներկայ աշխարհի առօրեան իր խայտաբղէտ խնդիրներով, փոխյարաբերական կեանքի անհաւասարակշիռ իրավիճակներով, պատերազմական անորոշ կացութիւններով եւ իրար խոշտանգելու անասնական կիրքով, աստուածաստեղծ մարդուն դուրս են բերել իր մարդկային կաշւից, գազանի մորթ զգեցնելով նրան:*

*Մահւան երկիւղը, որը պիտի նաեւ դատաստանի սարսափը դնէր մարդկանց հոգում, նախանց է արձանագրել ներկայ ժամանակներին, նրանց ինքնահաւանութեան եւ գիտութեան մէջ արձանագրած յաջողութիւնների պատճառով: Մարդկային ինքնավստահութիւնը գլել ու անցել է ամէն սահման, ամենազօր ոյժի յաւակնորդ դարձնելով նրան. սակայն մարդու սահմանափակ կարողութիւնը շուտով բացայայտւում է, երբ աստուածային անսահմանափակ ոյժի առջեւ է կանգնում մարդը: Այստեղ ի յայտ է գալիս նրա անզօրութիւնը եւ ճղճիմ ինքնութիւնը…:*

*Մահւան երկիւղը իր ամենածանր ազդեցութեամբ փորձում է խլել մարդու հոգու խաղաղութիւնը, եթէ նրա հոգին լցուել է աւելորդ մտահոգութիւններով, աշխարհիկ հոգսերով, եւ խորասուզուել նիւթական շահերի ապականեալ ջրերում: Հոգու ազատութիւնը միայն մահուամբ չի՛ յայտնւում: Մարդկային հոգին ազատ կարող է լինել նաեւ մարմնաւոր կեանքում, երբ մարդու միտքը ազատւում է աւելորդ խնդիրներից եւ լարուած թաքուն թակարդներից:*

*Մահւան երկիւղը նաեւ կարող ենք վանել մեր կեանքից, դրակա՛ն ճանապարհով: Անվերապահ հաւատքով կերտուող ճանապարհն է այն, որը առաջնորդում է մեզ առ Աստուած: Հաւատքի ճանապարհից ընթացող մարդը մահուանից չի՛ վախենայ, որովհետեւ մահը ո՛չ մի ոյժ չի՛ ունենայ իր վրայ: Մահը պարտութեան մատնող Յիսուսը մահից վախ չունէր: Յաւիտենական Վարդապետը իմանում էր, որ մահը միայն ժամանակաւոր մի պահ էր իր երկրաւոր կեանքի աւարտին, եւ շուտով Յարութիւն էր առնելու մեռելների աշխարհից:*

*Ինչքա՛ն թոյլ է մեր հաւատքը մեր կրօնի մեծ Վարդապետի հանդէպ… մէկ կողմից ամենայն վստահութեամբ դաւանում ենք Նրա աստուածութիւնը, իմանալով որ երրորդ օրը Յարութիւն առաւ մեռելներից, սակայն դեռեւս կասկած ունենք մեր սեփական Յարութեան: Չկա՞ն քրիստոնէական մեր շարքերում անձեր, որոնք մահը համարում են ամէն ինչի վախճանը…: Հաւատքի թուլութիւնը սկսել է տարածուել ամենուրեք, ամէն տեղ կասկածի բոյն դնելով: Աւետաբեր հրեշտակների պատգամը ճիշտ այս կասկածը փարատելու զօրեղ կոչ էր. «Այստեղ չէ՛, այլ Յարութիւն առաւ»: Նրանք նաեւ իւղաբեր կանանց ասացին, որ գնան եւ Նրա աշակերտներին եւ մանաւանդ ուրացող Պետրոսին աւետեն նոյն պատգամը. ինչո՞ւ. նրանց սրտից հեռացնելու համար մահւան երկիւղը:*

*Կեանքում ամենաքաջ ճանաչուած մարդն էլ վախեցել է մահուանից: Պատերազմական դրութեան մէջ յայտնուած, կամ ոճրագործի առջեւ կանգնած մարդկանց զգացած վախերից բացի, խաղաղ մահւան սնարում նուաղող մարդու դէմքի վրայ եւս երեւում է մահւան երկիւղը: Այս նշանակում է, որ մահուանից փախուստ չունի մարդ էակը այս կեանքում: Հողայնական ճակատագրով ստեղծուած մարդը վերադառնալու է հողին, որտեղից վերցուեց Աստծու ձեռամբ. սակայն իրեն համար սահմանուած օրերի ընթացքում, նա կարող է այնպէս ապրել, որ գէթ մահւան երկիւղը վանի դրականօրէն: Աստծուց չվախենալը եթէ մէկ երեսն է անաստուած մարդկանց, Նրա սահմանած մահուանից չվախենալը՝ միւս երեսը նրանց:*

*Հաւատացեալ մարդկանց մահուանից չվախենալը, Աստծու վրայ նրանց ունեցած աներկբայ հաւատքի արդիւնք է: Հաւատացեալ մարդն է, որ բացայայտ խոստովանում է ասելով, թէ մահւան րոպէին, Աստծու ձեռքերի մէջ է յանձնում իր հոգին, ինչպէս մեր Տէրը ասաց խաչի վրայ, իր կեանքի վերջին րոպէին…:*

*Մահուանից փախուստ չունենք, բայց մեր խորարմատ հաւատքով կարող ենք դրա պատճառած վախից փրկուել…: Քրիստոսի Յարութեան տօնը միանգամ եւս առիթ է ընծայում մեզ, վերստին խտացնելու մեր հաւատքի ուռկանը, որը հիւսուել է Տիրոջ Յարութեան աւետիսի նրբագոյն ոսկեթելերով:*

***Քրիստոս յարեաւ ի մեռելոց,***
***օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի. Ամէն:***

**ԳՐԻԳՈՐ ԱՐՔ. ՉԻՖԹՃԵԱՆ**
**Առաջնորդ**
**Ատրպատականի հայոց թեմի**
**Ս. Զատիկ 2024**
**Ազգային առաջնորդարան,**
**Թաւրիզ**

# ԱՆՇԵՂ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾԵԼ

Երբ Շաբաթ օրն անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայրը՝ Մարիամը եւ Սողոմէն, գնացին խունկ գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի գնան եւ օծեն Յիսուսի մարմինը»: (Մր. 16.1)



*Մարկոս Աւետարանիչն իր Աւետարանի վերջաւորութեանը, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան դէպքն սկսում է «Իւղաբեր Կանանց» դրուագով. մի բան, որ կարող է պարզօրէն ընկալուել ընթերցողի կողմից, սակայն եթէ խորապէս մտածենք պատահածի մասին, իրօք նա զարմանալի կարող է թուալ՝ մեզ համար:*

*Մեր Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը, երկրաւոր կեանքի վերջին եռամեայ տարիներին, երբ սկսեց Իր փրկագործական առաքելութիւնը, մեծ յոյս ներշնչեց իր առաքեալներին, աշակերտներին ու հետեւորդներին, ովքեր իրենց ամբողջ հաւատն ու յոյսը հիմնեցին երկնառաք Վարդապետի վրայ:*

*Այլազան ու բազմազան հրաշագործութիւններ ու նշաններ կատարող Աստուածորդին, իսկապէս եւ արդարօրէն, Իր հետեւորդների ներաշխարհում ընկալուեց որպէս Հին Կտակարանում մարգարէների կողմից խոստացուած այն Մեսիան, որ դարեր շարունակ հրեայ ժողովուրդն անհամբեր սպասում էր:*

*Ողջ ժողովրդի սպասումը նկատուած Փրկիչը, Երուսաղէմ յաղթական մուտքի ժամանակ այնպիսի տպաւորութիւն էր թողել Իրեն դիմաւորողների ներաշխարհում, որ բազմութիւնը ենթադրում էր, թէ հասել է այն րոպէն կամ պահը, երբ Երկնքի Արքայութիւնն անմիջապէս պիտի գայ ու վերականգնի Դաւթի թագաւորութիւնը:*

*Թէեւ մեր Տէրը տարբեր առիթներով երիցս կրկնել էր կանխասացութիւնն ու բացայայտօրէն ակնարկել էր Իր խաչելութեան, մահւան ու Յարութեան մասին, սակայն բթամիտ ամբոխի համար, երբ նմանօրինակ խանդավառութիւն եւ հոգեվիճակ վերջ է գտնում մեծ Առաջնորդի խաչելութեամբ, մահւամբ ու թաղմամբ, բոլոր հետեւորդների ու հաւատացողների մէջ անխտիր շիջեցնում եւ մարում է հաւատի ու մանաւանդ յոյսի վերջին նշոյլն անգամ:*

*Մտքերը կողպուած հաւատացեալների համար իսկական ճշմարտութիւնը ոչ թէ անհասկանալի էր միայն, այլեւ անընդունելի ու անբացատրելի: Տուն, տեղ, ընտանիք թողած, ինչքեր ու հարստութիւն ծախած ու բաշխած հետեւորդներն այդ պահին գտնւում էին անզօր ու անօգնական վիճակում, երբ ոչ ոք չէր կարող ոչ մի ձեւով խրատել, համոզել կամ գէթ մխիթարել հաւանականօրէն անձնասպանութեան սեմին հասած եւ մահւան կարիքը զգացող աշակերտներին:*

*Ինչպէ՞ս կարելի է այլ բան սպասել կամ ակնկալել մի հաւատացեալից, որի կրօնի եւ Սուրբ Գրքի հիմն ու առանցքը նկատուած խոստման իրականացումից յետոյ աւարտը լինի անսպասելի, անբացատրելի ու անհասկանալի: Այդպիսի դէպքում բնականաբար ենթական հասնելու է յուսալքութեան ու անհաւատութեան ծայրագոյն աստիճանի:*

*Տարբեր հոգեվիճակում չէին գտնւում «Իւղաբեր Կանայք», սակայն հակառակ բոլոր պատահածներին, նրանք ունեցան անսպասելի եւ օրհնակելի գիտակցութիւնը՝ շարունակելու իրենց բոլոր գործերը, պարտականութիւններն ու պաշտօնները, որոնց արդիւնքում դարձան ականատես վկաներն ու Յարութեան առաջին աւետաբերները:*

*Այսօր մենք ազգովի գտնւում ենք նոյն հոգեկան իրավիճակում: Տասնամեակներ շարունակ մեր յաղթանակներով հարբած, անտեսեցինք ամէն տեսակի նշան ու կարելիութիւն, ենթադրելով թէ ամէն ինչ հեզասահ կերպով անշեղօրէն ընթանալու է իր բնական հունով: Վերջին տարիները, սակայն, եկան մեզ ապացուցելու, թէ կեանքի պայմաններն ու բերումները փոփոխական են, անկարելի բան չկայ այս աշխարհում, իսկ թշնամիները միայն դրսից չէ, որ յայտնւում են, այլ մեր պարագային՝ յաճախ ներսից:*

*Սոյն իրականութիւնը մեր ներաշխարհում կատարեց այնպիսի մեծ ու վատ փոփոխութիւն, որ գրեթէ բոլորս մատնուեցինք անզօրութեան, խեղճութեան, տկարութեան, բայց մանաւանդ՝ անգործութեան: Դիւրին չէ մեր «Ազգի խաչելութեան», «Հայրենի հողերի մահւան» ու «Հայ Դատի թաղման» ականատես լինելը: Հմուտ վարպետներ ենք՝ այլոց մեղադրելու գործի մէջ, սակայն նւիրեալ արժէքների սրբապղծութիւնը մի հոգով կարելի չէ իրականացնել, այլ այն իր ընթացակարգի վախճանին կարող է հասնել միմիայն իւրաքանչիւրիս անտեսութեամբ, լռութեամբ, անհոգութեամբ, անտարբերութեամբ, կրաւորականութեամբ ու մանաւանդ անգործութեամբ:*

*Թող որ մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշագործ Յարութիւնն արթնութեան առիթ հանդիսանայ մեզ համար, որպէսզի սթափուենք մեր ներկայ կործանարար վիճակից, փոխենք մեր մեղսալից կեանքը, զղջանք ու ապաշխարենք, կասեցնենք ազգակործան ու հայրենակործան գործընթացը, ընտրենք բարեգործութեամբ առլեցուն աստուածահաճոյ կեանք եւ մանաւանդ վերականգնենք մեր հաւատն ու յոյսը, որի արդիւնքում վերստանձնենք մեր բոլոր պարտականութիւններն ու պարտաւորութիւնները՝ անձնական, անհատական թէ հաւաքական, եւ արժանանալով Աստծու ողորմութեանը, գթութեանն ու ներողամտութեանը, ոչ թէ ականատես վկայ, այլ մասնակից ները լինենք մեր Եկեղեցու, Ազգի ու Հայրենիքի սրբակենցաղ յաղթական Յարութեան՝ մեր ազգակիցների նկատմամբ մեր վերաբերմունքի փոփոխումով. եղբայրութեամբ, սիրով, յարգանքով, համերաշխութեամբ ու հանդուրժողութեամբ, որոնց ի տես աղաղակենք եւ ասենք.-*

***«Քրիստոս Յարեաւ Ի Մեռելոց.***
***Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:***

**Աղօթիւք եւ Օրհնութեամբ**
**ՍԻՓԱՆ ԱՐՔ. ՔԷՉԷՃԵԱՆ**
**Առաջնորդ Սպահանի հայոց թեմի**
**Մարտ 2024 թ.**
**Ազգային առաջնորդարան,**
**Ս. Ամենափրկչեան Վանք**
**Նոր Ջուղա – Իրան**

# Փաշինեան-Բլինքէն-դեր Լայեն հանդիպմանն ընդառաջ Իրանը զուսպ է. ինչո՞վ է պայմանաւորուած Իրանի դիրքորոշումը





Ապրիլի 5-ին Բրիւսէլում սպասուող Փաշինեան-դեր Լայեն-Բլինքէն հանդիպմանը հաշուած օրեր են մնացել: Ռեգիոնալ շահագրգիռ երկրներից միայն Իրանի Իսլամական Հանրապետութիւնն է, որը դեռ պաշտօնական ուղիղ անդրադարձ չի կատարել ՀՀ առաջիկայ եռակողմ շփումներին:

Միայն Բաքւում օրերս ԻԻՀ դեսպան Սէյէդ Աբաս Մուսաւին նշել էր, որ Արեւմուտքի միջամտութիւնը կը բարդացնի իրավիճակը Հարաւային Կովկասում:

«Տարածաշրջանի գործերին արեւմըտեան պետութիւնների միջամտութիւնը յաջողուած փորձ համարել չի կարելի: Այդ ուժերի գործունէութիւնը ոչ թէ կը նպաստի խնդիրների լուծմանը, այլ հակառակը՝ կ՚աւելի կը բարդացնի իրավիճակը»,- յայտարարել էր իրանցի դիւանագէտը՝ պնդելով, թէ «արեւմըտեան պետութիւնները նախեւառաջ՝ իրենց, այլ ոչ թէ՝ տարածաշրջանի շահերն են հետապնդում»:

«Մենք վստահ ենք, որ Հարաւային Կովկասի պետութիւններն ի վիճակի են սեփական ուժերով լուծել իրենց առջեւ ծառացած խնդիրները»,- յայտարարել էր Բաքւում Իրանի դեսպանը: Ապրիլի 5-ին ընդառաջ համապատասխան աշխատանք է սկսել իրականացնել տեղեկատուական դաշտում Ադրբեջանը, որը հայկական կողմի իբրեւ թէ սահմանագոտում զինտեխնիկայի կուտակման եւ տեղաշարժերի վերաբերեալ յայտարարութիւններ է անում: Նախօրէին ՀՀ ՊՆ-ն հերքեց այդ լուրերը՝ գրելով, որ Ադրբեջանի պաշտպանութեան նախարարութեան տարածած հաղորդագրութիւնն այն մասին, թէ իբր Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերը սահմանագօտու տարբեր ուղղութիւններում անձնակազմի, զրահատեխնիկայի, հրետանային եւ կրակային այլ միջոցների կուտակումներ, ակտիւ տեղաշարժեր են իրականացնում, չի համապատասխանում իրականութեանը:

«Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը նաեւ յայտնում է, որ մարտի 30-ին, Տելեգրամեան մի շարք ալիքներում տարածուել են ՀՀ ԶՈՒ շարքերը համալրած նորակոչիկ վարորդների՝ ուսումնական գործընթացի շրջանակում կատարած աւտոերթի լուսանկարներ՝ փորձելով դրանք ներկայացնել որպէս դէպի սահմաններն ուղղուած զօրաշարժ, ինչն իրականութեանը չի համապատասխանում:

Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի երկայնքով վերջին շրջանի օպերատիւ իրավիճակը ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը գնահատում է կայուն եւ սահմանի պահպանութեան համար լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտութիւն չի տեսնում»,- ասուած է հաղորդագրութիւնում:

Մի շարք վերլուծութիւնների համաձայն, Ադրբեջանի այս տեղեկատուաքարոզչական արշաւը պատահական չէ եւ միտուած է ապրիլի 5-ին սպասուող բանակցութիւններում ադրբեջանական ճնշումը եւ հեռակայ մասնակցութիւնն ապահովելուն: Սա, ըստ գնահատականների, ձեռնտու է նաեւ արեւմտեան ղեկավարներին, որոնք ունեն կայուն պատճառ ՀՀ-ին լուրջ աջակցութիւնից խուսափելը փաթեթաւորելու համար:

Այնուամենայնիւ, շատ փորձագէտներ նաեւ լայնածաւալ էսկալացիան չեն բացառում, թէեւ Նիկոլ Փաշինեանն իր վերջին յայտարարութիւններով ակնարկել է, որ պատրաստւում է կատարել Ադրբեջանի նոր պահանջները: Սակայն ռազմական էսկալացիայի վտանգի պարագայում, ռեգիոնում Իրանի դերակատարութեան եւ ապրիլի 5-ին ընդառաջ Իրանի յայտարարութիւնների զսպուածութիւնն ուշագրաւ վերլուծութեան թեմա է:

168.am-ի հետ զրոյցում իրանցի վերլուծաբան Կայհան Բարզեգարն ասաց, որ ՀՀ իշխանութիւնների սերտ շփումներն արեւմտեան առաջնորդների հետ, արեւմտամէտ որոշումներն Իրանին մտահոգում են շատ վաղուց, եւ իրանցի գործիչները պարբերաբար այդ մասին խօսում են: Նրա խօսքով, վստահաբար բացառութիւն չէ նաեւ ապրիլի 5-ին սպասուող եռակողմ հանդիպումը, որը մեծ ուշադրութիւն է գրաւել փորձագէտների կողմից հանդիպման ձեւաչափի առանձնայատկութեան պատճառով:

«Իրանում եւս անտարբեր չեն եւ շատ մօտիկից հետեւում են իրավիճակին, փորձում ազդել կայացող որոշումների վրայ: ՀՀ իշխանութիւնները լաւատեղեակ են, որ նման շփումները սպառնալիք են Իրանի համար, սակայն, կարծում եմ, որ այս հանդիպմանը չցանկացան առանձին անդրադառնալ, գուցէ իրանական կողմը համապատասխան խողովակներով իրազեկուած է, տեղեկացուած է օրակարգին, այսինքն՝ նախապատրաստուած է, ուստի Իրանում հարկ չեն համարում յաւելեալ լարուածութիւն մըտցընել երկկողմ յարաբերութիւններում: Ուշադրութիւն կը հրաւիրէի այն հանգամանքի վրայ, որ յայտարարուել է տնտեսական յարաբերութիւնները եւ հնարաւորութիւնները վերանայելու ցանկութեան մասին, հանդիպման հիմնական շեշտը դրուել է տնտեսական յարաբերութիւնների վրայ: Հասկանալի է, որ տնտեսութեան հիմքում եւ յարաբերութիւնների կենտրոնում հէնց քաղաքական երկխօսութիւնն է, սակայն Իրանն ինչպէ՞ս պէտք է ուղիղ քննադատի հանդիպումը, որն ունի տնտեսական բովանդակութիւն: Աւելի լայն կոնտեքստում Իրանն անընդհատ յայտարարում է, որ ռեգիոնում երրորդ ուժերի ռազմական ներկայութիւն չի ցանկանում»,- ասաց վերլուծաբանը:

Նրա կարծիքով, Իրանում վաղուց հասկանում են՝ ինչ է տեղի ունենում՝ ՌԴ դիրքերի էական թուլացում, Արեւմուտքի եւ Թուրքիայի դիրքերի ամրապնդում:

«Այս սցենարը, իհարկէ, ոգեւորիչ չէ, սակայն Իրանն աշխատում է Հայաստանի հետ, եւ ՀՀ-ից յայտարարում են, որ այդ համագործակցութիւնն ուղղուած չէ երրորդ երկրների դէմ, աւելին, յայտարարում են, որ ՀՀ-ն չի հաւակնում դառնալ ՆԱՏՕ-ի անդամ: Կարծում եմ՝ ՀՀ տարածքային ամբողջականութեան եւ դրան փոխկապակցուած հարցերի վերաբերեալ Իրանի դիրքորոշումը չի փոխուել, եւ անհրաժեշտութեան դէպքում Իրանը կարտայայտուի»,- ասաց նա:

Սակայն վերլուծաբանը գտնում է, որ ՀՀ-Արեւմուտք «մտերմութիւնը» որոշ սառնութիւն եւ փոխըմբռնման պակաս է բերել յարաբերութիւններ, քանի որ Իրանն ու ՀՀ-ն ունեն լիովին տարբեր տեսակէտ Արեւմուտքի հարաւկովկասեան քաղաքականութեան եւ ընդհանրապէս Արեւմուտքի քաղաքականութեան վերաբերեալ ամենուր:

«Արտաքին քաղաքականութեան հարցում նման ռադիկալ տարբերութիւնը յատկապէս այս օրերին չի կարող իր անդրադարձը չունենալ, սակայն Հարաւային Կովկասն ու Մերձաւոր Արեւելքն ամենաբարդ ռեգիոններից են, որտեղ շատ այլ հանգամանքներ եւս կարեւոր են, ինչպէս նաեւ բաւականին ուժեղ ռեգիոնալ համագործակցութիւնները, որոնք հէնց վերջին երկու տարուայ ընթացքում ամրապնդւում են: Ուստի բարդ է ասել, թէ եւս երկու տարի անց ինչպիսին կը լինի այդ համագործակցութիւնը, ուստի շտապել պէտք չէ: ՀՀ-ն ու ԵՄ-ն, ԱՄՆ-ը դեռ քննարկում են յարաբերութիւնները, եւ դժուար է ասել, թէ քաղաքական յանձնառութիւնը եւ առկայ խնդիրներն ուր կը հասցնեն կողմերին»,- նման տեսակէտ յայտնեց վերլուծաբանը:

# Կառավարութիւնում տեղեակ չեն, թէ ում կողմից եւ ինչ իրաւական հիմքի վրայ է պատրաստուել այն մակետը, որը ձեռքին Փաշինեանը շրջում է



ՀՀ կառավարութիւնում դժուարանում են ասել, թէ ինչի հիման վրայ է կազմուել այն մակետը, որը Նիկոլ Փաշինեանի կողմից ներկայացւում է որպէս ՀՀ քարտէզ:

Յիշեցնենք, որ մարտի 12-ին Նիկոլ Փաշինեանը մամուլի ասուլիսին ներկայացել էր ինչ-որ թիթեղեայ մակետով՝ պնդելով, թէ դա Հայաստանի Հանրապետութեան քարտէզն է, որի ամբողջականութիւնը պատրաստ են պաշտպանել:

Այդ թիթեղը դարձել է Նիկոլը Փաշինեանի գրեթէ մշտական ուղեկիցը՝ անգամ քպականների հետ հանդիպումների ժամանակ:

«Փաստինֆօ»-ն մարտի 21-ին գրաւոր հարցում է ուղարկել ՀՀ կառավարութեան աշխատակազմ՝ խնդրելով տեղեկացնել, թէ այն մակետը, որը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ներկայացրեց իր վերջին ասուլիսում, ի՞նչ քարտէզների հիման վրայ է կազմուել: Ըստ այդ մակետի՝ ՀՀ տարածքը քանի՞ քառակուսի կիլոմետր է: Որն է այդ մակետի իրաւական հիմքը, ում կողմից է պատրաստուել: Արդեօ՞ք Ադրբեջանը համաձայնել է ճանաչել ՀՀ տարածքային ամբողջականութիւնը այն ընդգրկմամբ, որը ներկայացուած է այդ մակետում:

Բացի այդ՝ Նիկոլ Փաշինեանը յայտարարել էր, թէ պատրաստ են սահմանագծում սկսել Տաւուշից: Հարցմամբ՝ յիշեցրել էինք, սահմանագծումը, փաստացի, սկսուել է Սիւնիքից ու հետաքրքրուել, թէ ինչո՞ւ սահմանազատման գործընթացը չի շարունակւում նախեւառաջ Սիւնիքի մարզից, որտեղ դեռ 2020 թ.-ի պատերազմից յետոյ ադրբեջանական կողմը սկըսել էր սահմանագծում իրականացնել՝ ներկայացնելով GPS քարտէզները:

Արդեօք հայկական կողմը պատրաստակամ է միակողմանի դուրս գալ Ադրբեջանի կողմից պահանջուած տարածքներից, քանի դեռ ադրբեջանական զօրքերը գտնւում են ՀՀ սուվերեն տարածքում, որոնք օկուպացրել է 2020 թուականից յետոյ:

Հայկական կողմն ունի՞ վստահութիւն, որ, օրինակ, Տաւուշի ներկայիս դիրքերից զօրքերը հետ քաշելու հետ միաժամանակ ադրբեջանական կողմը նոյնն կերպ կը յանձնի նաեւ Բերքաբերի օկուպացուած տարածքները, զօրքերը

(Շար. 6-րդ էջում)

## ԻՆՉՈ՞Ւ...

(Շար. 4-րդ էջից)

մնալով աւետարանական ուսուցումներին: Հայ ժողովրդի ու եկեղեցու ողջ պատմութիւնը գեղեցկագոյն վկան է այդ պայքարի:

Պայքար՝ յանուն իր հաւատքի անաղարտ պահպանման:

Պայքար՝ յանուն իր լեզւի ինքնուրոյն պահպանման, քանի որ լեզուն իր ինքնուրոյնութեան եւ ինքնատպութեան կնիքն է:

Պայքար՝ յանուն իր մշակոյթի, հոգեւոր անժամանցելի արժէքների պահպանման համար:

Պայքար՝ յանուն իր հայրենիքի, որի ազատագրութեան համար ծով արիւն թափեց առանց յուսահատութեան:

Պայքար՝ յանուն իր ընտանեկան սրբութեան, յանուն իր լինելութեան հետ կապուած աւանդութիւնների պահպանման:

Պայքար՝ յանուն իր աւելի քան մէկ ու կէս միլիոն սրբազան նահատակների անկատար իղձերի իրագործման:

Պայքար յանուն իր իրաւունքների ձեռքբերման մանաւանդ գերեւարուած Արցախին, եւ վերջապէս պայքար մինչեւ բախտաւոր այն օրը երբ նա ազգովին վայելի Յարութիւնը իր Փրկչին իր ամբողջական հայրենիքի երկնակամարի ներքեւ:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան խորհուրդով մեզ շնորհուած նոր կեանքը պէտք է դարձնենք մեկնակէտ աստուածատուր կեանքի, որ է սիրոյ, զոհողութեան ու նուիրումի, բարեգործութեան ու խաղաղութեան կեանք, չարի վրայ տարուած յաղթական կեանք: Չմոռանանք, որ Քրիստոս իր Յարութեամբ չարը խափանեց եւ բարի կեանքով մեզ արժանացրեց իր շնորհքին եւ օրհնութեան:

Քրիստոսի կենսապարգեւ Յարութիւնը դարերով զինեց մեր ժողովրդի զաւակներին, ովքեր ժայռանման իրենց հաւատքով յաղթեցին ամէն տեսակ դժուարութիւններ, չընկրճւեցին իրենց առջեւ պատնէշուող խոչընդոտներից, ընդհակառակը առաւել զօտեպընդուած Քրիստոսի Յարութեան խորհրդով քալեցին կիզիչ արեւի տակ, կտրեցին լեռներ ու ձորեր հաւատալով որ խաչին, գողգոթացեալ կեանքին յաջորդելու է վարդահեղեղ արշալոյսը Յարութեան:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը հրաւէր է մեզ խորհրդածելու Քրիստոսի մահուան վրայ տարած յաղթանակին եւ յաղթանակից մեզ եկող պատգամին:

Այսօրուայ մեր գաղութային եւ ինչու չէ նաեւ հայրենիքեան կեանքը մեզ մղում է, որ պատասխանատուութեան բարձրագոյն գիտակցութեամբ վերատեսենք մեր կեանքը այն պատուաստելով Քրիստոսի հրաշափառ Յարութիւնից մեզ փոխանցուող անժամանցելի արժէքներով, որոնք ի վերջոյ մեզ առաջնորդելու են բաղձացուած փրկութեան:

Յարութեան խորհուրդով լուսաւոր բանանք մագաղաթեայ էջերը մեր պատմութեան հաղորդակցութեան մէջ մտնելու համար մեր հայրերի իմաստութեան հետ ի խնդիր առաւել աստուածահաճ եւ իրատես ու հայաբոյր կեանքի:

Այս խոհերով շնորհաւորում եմ մեր ժողովրդի բոլոր զաւակներին եւ յատկապէս իրանահայ, մասնաւորաբար թեհրանահայ մեր զաւակներին, բոլորին փոխանցելով Յարութեան Աւետիսը:

***Քրիստոս յարեաւ ի մեռելոց***
***Ձեզ եւ մեզ մեծ Աւետիս. Ամէն.***

**ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ**
**Առաջնորդ Թեհրանի հայոց թեմի**
**Ս. Զատիկ 2024**
**Թեհրան**

## ՔՊ-ին...

(Շար. 3-րդ էջից)

Ցաւալի է այն «կուրութիւնը», որը խանգարում է ոմանց տեսնել, որ Նիկոլ Փաշինեանը ոչ միայն ազգակործան պատուհաս է, կապիտուլիանտ ու դաւաճան, այլեւ անհաւատ (երանի պարզապէս աթեիստ լինէր):

Ցաւալի է այն «կուրութիւնը», որը շատերին խանգարում է հասկանալ, որ Նիկոլ Փաշինեանի պաշտօնավարման արդիւնքում մենք ի վերջոյ կը զրկւենք ոչ միայն հայրենիքից ու պետութիւնից, այլեւ մեզանից կը խլեն պատմութիւնն ու հաւատքը ու վերջնարդիւնքում, երբ կորցնենք բոլոր արժէքները, կը դադարենք նաեւ ազգ լինելուց:

Վերջում մեր «նորաթուխ արեւմտամէտներին», որոնք այդքան խանդավառուած են տարածաշրջանում ԱՄՆ-ի ակտիւացմամբ, մի պարզ օրինակ կարելի է բերել: Պատկերացրէք ԱՄՆ-ում, որը իրաւամբ կամ ոչ, այնուամենայնիւ համարւում է ժողովրդավարութեան ու խօսքի ազատութեան համաշխարհային էտալոն, որեւէ նախագահ իրեն կամ իր քաղաքական ուժը համեմատէր ու նոյնականացնէր Յիսուս Քրիստոսի հետ, ապա նրա հետագայ պաշտօնավարումն ընդամէնը ժամերի հարց կը լինէր:

**Կարէն Կարապետեան**
**Yerevanlive.am-ի խմբագիր**

## ՈՒՐԿԷ՞ ՀԱՍԱՆՔ, ԴԷՊԻ Ո՞ՒՐ – 3

# ԴԺՈՒԱՐ, ԲԱՅՑ Ո՛Չ ԱՆԿԱՐԵԼԻ ԳՈՐԾ



**Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Յովնաթան,**
**Ինչքա՜ն հանճար, խելք ես տեսել,- Էլ՜ կը տեսնես:**
**Ե. ՉԱՐԵՆՑ**

*Մեր նախընթաց երկու սիւնակներով, փորձեցինք, առանց սպառիչ ըլլալու յաւակնութեան՝ ընդհանուր ուրւագիծը կազմել Երեւանի «քայլող»-ՔՊ-ական իշխանութեան գործած եւ օրակարգի վրայ դրած վնասարար եւ կորստաբեր քայլերուն: Նշեցինք նաեւ, որ բացի իշխանականներու նեղ խմբակէն, համընդհանուր համախոհութիւն կայ, թէ ի՞նչ պէտք է ընել, հայրենիքն ու ազգը վերջնական կորուստէ փրկելու, վերականգնումի երթը ճամբայ հանելու համար:*

*Մեր արձանագրած կէտերն ու ախտաճանաչումները նորութիւն չէին: Ինչ որ պիտի արձանագրենք այսուհետեւ, իբրեւ ելքի միջոցներ՝ նմանապէս նորութիւններ պիտի չըլլան, այլ ճիգ մը՝ նմանապէս ուրւագծային կերպով համադրելու փրկութեան պատկերացումները:*

*Նախ ընենք կարեւոր հաստատում մը: Երեւանի ներկայ իշխանութիւնը յստակ դարձուցած է, թէ ո՛չ կարող է, ո՛չ ալ տրամադիր՝ երկիրը փրկելու, վերականգնումի ուղին բանալու առումով, այլ աւելի՛ կամովին, քան ակամայ՝ պիտի շարունակէ իրականացնել այն բոլորը, որոնք իրեն կը թելադրին «դուրսերէն», սկսելով՝ Ազրբէջանէն ու Թուրքիայէն: Ուրեմն կը մնայ մէկ ուղի: Ընդդիմադիր ճակատը կազմողներուն կը մնայ միացնել ձեռքերը եւ ԳՈՐԾԵԼ, ի խնդիր գահավէժ ընթացքին կասեցման եւ դարմանումին: Իսկ երբ կ'ըսենք ընդդիմադիր ճակատ, ի մտի ունինք թէ՛ խորհրդարանական, եւ թէ՛ արտախորհրդարանական ընդդիմութիւնը, եկեղեցին, բանակն ու ուժային կառոյցներ, մշակոյթի գործիչներ, մտաւորականներ, քաղաքագէտդիւանագէտներ, պատմագէտներ, մէկ խօսքով՝ տարբեր ոլորտներու մէջ գործող՝ բանիմաց եւ կարողութիւն-փորձառութիւն կուտակած անհատներ եւ խմբաւորումներ:*

*Ընդդիմադիրներու ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ իր դիմաց ունի աշխատանքի երկու մեծ ոլորտ. ներքին եւ արտաքին-դիւանագիտական դաշտերը: Իւրաքանչիւրին առջեւ կանգ առնենք հպանցիկ նշումներով:*

*Նախ՝ ներքին դաշտը, ուր այլապէս կան բազմաթիւ գիծեր:*

### *ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ*

*Կարելի է հազար ու մէկ արդարացի բացատրութիւն արձանագրել (մեկնաբաններ ամէն օր կը ցանկագրեն), թէ իշխանափոխութիւնը ինչո՛ւ հրամայական է. նման ցանկագրում պիտի հասցնէ հետեւեալ եզրակացութեան. իշխանաւորները ունին մէկ մտասեւեռում՝ զիրենք կառավարողներուն յենելով՝ կառչած մնալ աթոռին ու չկորսնցնել ամէն տեսակի... պարգեւավճար: Ասոնց չյայտարարուած մէկ նշանաբանն է՝ «Ինձմէ ետք ջրհեղեղ*)»:*

*Իշխանափոխութեան հրամայականը գոնէ վերջին աւելի քան երեք տարիներուն շարժման մէջ կը պահէ ընդդիմադիրները: Անոնց ստեղծած բողոքի ալիքները եւ երկիրը ճիշտ ուղիի վերադարձնելու փորձերը ցարդ սպասուած արդիւնքին չեն հասած, բազմաթիւ՝ ներքին ու արտաքին ազդեցութիւններու պատճառով, որոնցմէ առաջինն է իշխանութեան բիրտ հակադարձութիւնները, տրամաբանութենէ զուրկ քարոզչութիւնը, ժողովուրդի բաժանւածութիւնը խորացնելու անոր ուղղակի եւ անուղղակի ճիգերը: Հետեւաբար, ընդդիմադիրները հարկադրուած են ձեւը գտնել պարտադրրուած՝ շինծու «փակ օղակ»-ը խորտակելու: Այս աշխատանքը կը թելադրէ համակարգւած եւ աննահանջ գործ կատարել բազմաթիւ ճակատներու վրայ. այսինքն՝ իշխանաւորները միակ թիրախը, հասցէն չեն տարւելիք աշխատանքին (այս աշխատանքը նորութիւն չէ, այլ կը կարօտի արագ տարածումի). միւս հասցէներն են իշխանաւորներու խաբէութեան պատանդ մնացող, այս վարչախումբին վնասարար, Հայաստանի շահերէն բացի՝ բազմաթիւ այլ շահերու անոր ծառայութեան վրայ աչք փակողները, անոնք ըլլան Հայաստանի մէջ (ներկայիս Արցախի մասին չենք խօսիր), թէ Սփիւռքի տարածքին: Մէկ խօսքով, «Զարթի՛ր, Լաօ՛» շարժումը կը մնայ այժմէական, անիկա պէտք է նոր արտայայտութիւն գտնէ փողոցէն մինչեւ տեսանելի բոլոր ոլորտներ: Անմիջապէս նշենք, որ խորհրդարանական եւ այլ ընդդիմադիրներ վերջին շրջանին դարձեալ սկսած են տեղեկատւական-քարոզչական աշխատանքի դաշտերը տարածել Երեւանէն անդին, հասնիլ մարզեր, կենտրոն հանդիսացող քաղաքներ: Այս բոլորը պիտի ծառայեն ժողովուրդի իմացութեան զարգացման, մասնաւորապէս ցոյց տալու խաբկանքով եւ սին խոստումներով տարւածներուն, որ «բարի տրամադրութիւններ»-ով իշխանութիւն պահողները գործնապէս կը նեղցնեն բարեկեցութեան յոյսի հորիզոնները, այնպէս՝ ինչպէս կը նեղնան ու աւելի՛ եւս պիտի նեղնան հայրենիքի տարածքները: Այս ծիրին մէջ, պէտք է հանրութեան յստակօրէն ցոյց տալ գործւած աւերը եւ յանցագործները ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԻ ենթարկելու օրինական ուղին:*

*Ներքին դաշտերու մէջ ընդդիմադիրներուն դիմագրաւած մարտահրաւէրները բնականաբար այս ծիրին մէջ չեն սահմանափակւիր, կան արտաքին դաշտեր, որոնց կանդրադառնանք առանձին: Հոս բաւականանանք միայն ընդգծելով, որ ներքին ու արտաքին ոլորտները անքակտելիօրէն զօդւած են իրարու, մէկը միւսին յենարանն է:*

### *Ո՞Վ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԷ*

*Իշխանափոխութեան համար յիշեալ ու բազում այլ հրամայականներուն՝ կը հետեւի նոյնքան եւ աւելի՛ կարեւոր հաստատում մը, որ ինքնաբերաբար իր մէջ կը պարունակէ բացայայտ... «կորսւած օղակ»-ը: Այս իշխանութեան պէտք է յաջորդէ ԳՈՐԾԷ ՀԱՍԿՑՈՂ ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒ վարչախումբ մը, որ ատակ ըլլայ, կարողութիւնը ունենայ գործելու բազմաթիւ համարժէք գիծերու վրայ, դիմագրաւել եւ յաղթահարել նոյն այդ գիծերուն վրայ ստեղծւած անմիջական եւ հեռահաս մարտահրաւէրները:*

*Կան բազմաթիւ նախադրեալներ, որոնցմէ առաջինն է ունենալ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐՈՒ, ԻՍԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ կազմ մը, որ ներգրաւէ բոլոր կուսակցութիւններն ու քաղաքական հոսանքները (ինչո՞ւ չէ նաեւ «ապաշխարելու» պատրաստ ՔՊ-ականներ), մշակէ բազմաճիւղ եւ բազմախաւ ԳՈՐԾԻ՝ ըստ կարելւոյն ամբողջական ծրագիր մը:*

*Երբ կ'ըսենք, որ նոր վարչակազմը պէտք է ներգրաւէ բոլոր կողմերը, ի մտի չունինք կուսակցական ներկայացուցիչներով կազմւած խումբ մը (իսկ եթէ հոն ըլլա՛ն մասնագէտ կուսակցականներ, ո՛չ մէկ անպատեհութիւն), որ իր ետին ունենայ ԲՈԼՈՐԻՆ զօրակցութիւնը, աջակցութիւնը, անվերապահօրէն գործակցելու պատրաստակամութիւնը: Գաղտնիք չէ, որ ներկայի իշխանութիւնը հայրենիքին պատճառած է անչափելի կորուստներ (հող, մարդուժ, տնտեսութիւն, մշակոյթ եւ այլ, փաստացիօրէն ամբողջացնելու այն, ինչ որ պակաս կը ձգեն թուրքն ու ազերին), որոնց դարմանումը կը կարօտի օղակ առ օղակ ընդարձակւող գործի: Այլ խօսքով, առաջին գործը պիտի ըլլայ ճշտել առաջնահերթութիւնները, որոնց կենսագործումն իսկ հիմ պիտի ծառայէ յաջորդ՝ անմիջական օղակներուն եւ աւելի հեռահաս ծրագիրներու հետապնդման:*

*Բանիմաց մասնագէտներէ կազմըւած նոր վարչախումբին ամենէն կարեւոր ստորոգելին պիտի ըլլայ ՀԱՒԱՔԱԿԱՆ, ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ձեւաւորումը եւ իրականացումը: Վերջին տարիներու փորձերը մեզ կրնան հասցնել նա՛եւ այն եզրակացութեան, որ ժողովուրդը, անկախ իշխանաւորներու քարոզչութեան պատանդը մնալու վիճակէն՝ ըստ բաւականին չընդառաջեր ՇԱՐԺՈՒՄԻՆ, որովհետեւ մէկ կողմէ՝ Շարժումին մէջ կ'երեւին անհատներ, որոնց դէմ «սեւացրէք»-ի խօլ արշաւներ կը տարւին, այդ անհատները կը դասւին «նախկիններ» ցանկին տակ եւ ժողովուրդին կ'ըսւի, թէ բոլոր նախկինները մերժելի են (վէճ չկայ, որ նախկիններու կարգ մը ըրածնե՛րն են մերժելին), իսկ միւս կողմէ, ժողովուրդը չէ յաջողած ինքզինք ձերբազատել «նախկիններ»-էն շատ աւելի՛ հին օրերու տրամաբանութենէ մը, որ է՝ անհատ առաջնորդի փնտրտուքը:*

*Պահ մը մտածենք, որ ժողովուրդի այդ պատկերացումին հետեւելով՝ հրապարակ գայ մէկ (կամ մէկ քանի) առաջնորդող դէմք. կասկած պէտք չէ ունենալ, որ եթէ ան երկնատուր շնորհքներով ալ օժտւած ըլլայ (նման բան երեւակայելի չէ), իշխանաւորներու խմբակը եւ անոր լծակից քարոզիչները (լսատեսողական մամուլ թէ համացանցային «աղբանոցներ») հնարքներ պիտի ձեւաւորեն՝ վարկաբեկելու եւ անոր ճիգերը բթացնելու: Մինչդեռ, ԿԱՐՈՂ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԱՄԵՐԱՇԽ ԵՒ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՎԱՅԵԼՈՂ ՎԱՐՉԱԿԱԶՄ ՄԸ աւելի լայն հնարաւորութիւն պիտի ունենայ իր կազմելիք լայնածիր ծրագիրը համոզիչ դարձնելու եւ անոր շուրջ ժողովուրդը (ո՛չ ամբոխներ) հաւաքագրելու:*

*Մշակելի ծրագիրը ի բնէ պիտի պարունակէ այն տարրերը, որոնք ո՛չ միայն պիտի ըլլան վերջին տարիներու խաբեպատիր առաջադրանքներուն ժխտումը, այլ իսկական դարամանումի սերմերը: Անմիջապէս նշենք, որ վիթխարի թւացող այս գործը խորքին մէջ ճամբայ ելած է շատոնց, զայն իրականացնելու առանձին-առանձին փորձեր եղած են, կը մնայ այդ բոլորին մէկ յայտարարի վրայ հաւաքագրումը:*

### *ԾՐԱԳԻՐԻՆ ԵՆԹԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ*

*Պէտք չունինք երկար ցանկեր կազմելու, թէ ներքին դաշտին մէջ աշխատանքի ինչպիսի՛ գիծեր կը տարածին յաջորդ իշխանութեան դիմաց: Պէտք է ընդունինք. իշխանափոխութիւնը ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ քայլ չէ, ո՛չ ալ աթոռակռիւ (այս դրածոյ մտածողութեան դարմանո՛ւմն իսկ հրամայական է), այլ փրկութեան սկիզբ:*

*Ներքին բարեփոխումներու ոլորտը կ'ընդգրկէ բանակը, ներքին ապահովութեան ուժերը-ոստիկանութիւնը (որ ներկայիս իրողապէս մասնւած է վարչախումբին վարձկան-պահակը ըլլալու կացութեան), դատական համակարգը (որ իսկապէս դառնայ անկախ իշխանութիւն եւ որեւէ մէկը չհամարձակի յայտարարել, թէ «կա՞յ դատաւոր մը, որ իմ խօսքէս դուրս գայ»), նոյնինքն գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններուն համակարգը, որոնցմէ պէտք է վանել ԽԾԲ-ի մի՛շտ վերարտադրւող «տրամաբանութիւնը»: Բաւականանք նշելով, որ այս ախտը դարմանելու խոստումով իշխանութեան հասածները հիմա շատ աւելի խորունկ կերպով ընկղմած են այդ տիղմին մէջ: Սա ալ լայնօրէն բացայայտելի մարտահրաւէր է (այսինքն՝ այս իրականութիւնը տարածել իշխանաւորներուն սիրահարւած մնացողներուն մէջ):*

*Առանձին եւ կենսական նշանակութիւն ունեցող կալւած է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ վերականգնումը, վերջ տալու համար ներկայի եւ անցեալի բռնատիրական-մենատիրական դրութիւններուն: Սա ինքնաբերաբար առիթ պիտի տայ «նախկիններու»-ն, որպէսզի ճիգ ընեն դարմանելու իրենց օրով արձանագրւած սխալներն ու բացթողումները: Կը կարծենք, որ այս մասին երկար խօսելու պէտք չունինք: Նմանապէս պէտք չունինք երկար խօսելու, որ առաջադրւած բարեփոխումներն ու անոնց տանող ծրագիրները կը կարօտին ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՒ, մինչդեռ այսօրւան իշխանաւորները յոխորտանքով յայտարարած են, թէ իրենց «արժանիք»-ներէն մէկն ալ... որեւէ գաղափարի չհետեւիլն է:*

*Նոյնքան կարեւոր ոլորտներ են ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, այսինքն՝ պատմութեան, ազգային արժէքներու եւ մշակոյթի իմացութեան վերականգնումը, անվիճելի իրաւունքներու տիրութեան կամքին վերահաստատումը՝ իր բոլոր ենթատարածքներով միասին: Այլ խօսքով, ԱԶԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ գիտակցումը պէտք է դարմանէ ո՛չ միայն արդէն երեք եւ աւելի տարիներու պատմութիւն ունեցող՝ ապազգայնացնող «դաստիրակութիւնը», այլ ժողովուրդի բոլոր սերունդներուն միտքին ու հոգիին մէջ վերականգնէն Հայաստան աշխարհի ամբողջականութիւնն ու մեր պատմութեան պայծառ եւ մութ փուլերուն իմացութիւնը: Պէտք է վերջ տալ այն քարոզչութեան, թէ անցեալին, մենք միայն ձախորդութիւններ եւ պարտութիւններ արձանագրած ենք (մինչեւ իսկ 2016-ի պատերազմն ու նոյնինքն Արցախեան առաջին պատերազմը կը ներկայացնեն իբրեւ պարտութիւն կամ խաբուսիկ բան, ոտնակոխելով նահատակ ու զոհաբերողներ):*

*Քայքայւած տնտեսութիւնը կը սպասէ մասնագիտական գնահատումի եւ դէպի բարելաւում առաջնորդող յըստակ ծրագիրներու, որոնց մէկ մասը կը տարածին այլ երկիրներու հետ գործակցական կապերը վերագընահատելու եւ բարելաւելու (եւ ո՛չ թէ եղածն ալ քանդելու, անդամալուծելու): Այս դաշտին մէջ պէտք է դիտել նաեւ հանրութեան հասարակական վիճակի բարեփոխման, իսկական, եւ ո՛չ թէ մասնակի (որոշ փոքրամասնութեան մը) շահերուն ապահովման հեռանկարները: Ցանկագրումի կարգով, արձանագրենք գիւղատընտեսութիւնը, մանր ու մեծ ճարտարարւեստը, շուկան, մինչեւ իսկ «առօրեայ-իկ» հարցեր, ինչպէս՝ ճամբաներու առողջացումը, շինարարութեան մարզին հաւասարակշիռ զարգացումը, առողջապահութեան մարզն ու, մէկ խօսքով՝ ժողովուրդը ամէն օր յուզող տագնապները (մեր խօսքը անթերի ու իդէալական դրութեան մը մասին չէ):*

*Ներքին մարտահրաւէրներու դիմագրաւման համար, նոր վարչախումբը ունի «անտեսանելի» մարտահրաւէր մը (այս կէտը յաճախ կը մատնանշւի բանիմացներու եւ քաղաքական մարդոց կողմէ, սակայն կը մնայ կաղ): ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՍՑՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ, որ երկրին այս կամ այն մարզը, աշխատանքի ոլորտները յուզող, տագնապի մատնող «մասնակի հարցեր»-ը նոյն խրամատին մէջ կը դնեն բոլորը, հետեւաբար, անոնց դիմակայումն ու դարմանումն ալ կը կարօտի բոլորի ձեռքերուն – եւ կամքին – միացման: Ինքնաշարժ վարողին, ձկնորսին, երկրագործին, առեւտրականին (մանաւանդ երբ արտածումի ճամբաները կը վտանգւին) տագնապները առանձնակի չեն, նահատակներու ընտանիքներուն ողբը միայն իրենց չի պատկանիր (յիշենք Աբովեանի «Վէրք ՀԱՅԱՍՏԱՆԻ-ն», որ ողբի տարած է բոլոր հայրենասէրները), ինչպէս որ առանձնակի վտանգներ չեն Սիւնիքի, Տաւուշի, Ջերմուկի կամ սահմանամերձ այլ գօտիներու գլխավերեւին կախւած «Դամոկլեան սուր»-երը: Մէկ խօսքով, պէտք է նոր մակարդակի հասցնել մայրաքաղաքին, մեծ ու փոքր քաղաքներուն, մարզերուն ու գիւղերուն պահանջներուն համաչափ հոգածութիւնը, որպէսզի զարգացումն ալ վերադառնայ համաչափութեան ուղի:*

*Երկրի ներքին շրջաններուն միջեւ համաչափութեան ու յարակցութեան գիտակցումը պիտի չմնայ Հայաստանի այժմու սահմաններուն մէջ, այլ պիտի տարածւին վերստին ազատագրելի Արցախին եւ հայաստանամերձ ու հեռակայ օջախներուն վրայ, որպէսզի հայրենիքին ու ազգին ԴԱՐՄԱՆՈՒՄԸ ըլլայ ըստ կարելւոյն ամբողջական:*

### *«ԱՆԿԱՐԵԼԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ»*

*Ներկայի տւեալներով, անխուսափելի եւ անարիւն իշխանափոխութիւնը՝ մեկնակէտը պիտի ըլլայ հերքըիւլեան աշխատանքի մը, որ կը թւի «անկարելի առաքելութիւն»: Նկատի չունինք միայն ներքին ոլորտները:*

*«Անկարելի առաքելութիւն» բառակապակցութիւնը անպայման որ կը յուշէ պատկերասփիւռային ոստիկանական-արկածախնդրական հաղորդաշար մը, որ երիտասարդներու եւ պատանիներու կողմէ մեծ հաճոյքով կը դիտւէր անցեալ դարու 60-ական եւ 70-ական տարիներուն: Խրդին եւ անկարելի թւացող վտանգալից գործերու դրկւող խումբ մը անպայման կը յաջողէր իր ծրագիրը յաջողցնել, «չարը» խաղի կը բերւէր, կը պարտըւէր, եւ «անկարելի առաքելութիւն»-ը յաջողութեամբ կը պսակւէր:*

*Հայաստանի փրկութիւնն ու վերականգնումը, մեր արդար իրաւունքներուն, բոլո՛ր իրաւունքներուն վերատիրացումը պատկերասփիւռային հաղորդաշար չեն: Սակայն երբ ազգ մը որոշէ լարել իր բոլոր մկանները, քաղաքական, տնտեսական եւ «ներքին» ու այլ սփիւռքներու մկանները, «անկարելի»-ն կրնա՛յ պարտւիլ, կորսւած եւ անջատւած թելերը կրնան վերամիանալ եւ դառնալ հէնք՝ Հայաստան-գորգը նոր պատկերներով հիւսելու:*

**Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ**
**3-10 մարտի 2024**

-----------------------------

***(*) “Apres moi, le deluge”, ինձմէ ետք ջրհեղեղ՝ պատմական խօսք մըն է, արձակւած՝ Ֆրանսայի 18-րդ դարու թագաւորներէն Լուի 15-րդի կողմէ: Ան պատմութիւն արձանագրած է՝ իր երկիրը կորստաբեր եւ կործանարար փուլերու մէջ նետելով: Մահէն (1774) 15 տարի ետք պայթեցաւ Ֆրանսայի առաջին մեծ յեղափոխութիւնը: Հայաստան չի կրնար 15 տարի եւս սպասել...***

## Կառավարութիւնում...

(Շար. 5-րդ էջից)

*դուրս կը բերի ՀՀ ինքնիշխան այն տարածքներից, որոնք օկուպացրել է 2020 թւականից յետոյ:*

*ՀՀ-ն պատրա՞ստ է միակողմանի բարի կամք դրսեւորել ու զօրքերը հետ քաշել՝ անկախ Բաքւի գործողութիւններից:*

*Սակայն պարզւեց, որ նշւած հարցերից ոչ մէկի պատասխանը Նիկոլ Փաշինեանի աշխատակազմը չունի: Չգիտեն անգամ Փաշինեանի՝ շրջանառութեան մէջ դրած մակետի իրական հիմնաւորումները ու մէկ ամիս ժամանակ են խնդրել՝ լրացուցիչ ուսումնասիրութիւն կատարելու եւ հարցերին պատասխանելու համար: Սա եւս մէկ առիթ է ՀՀ դատախազութեան համար (ընդգծենք՝ ՀՀ եւ ոչ թէ՝ Նիկոլ Փաշինեանի դատախազութեան- խմբ.) վարոյթ նախաձեռնել՝ պետութեան անվտանգութեան դէմ ուղղւած յանցագործութեան յատկանիշերով:*

*Բաւական է միայն մէկ մէջբերում՝ ՀՀ Քրէական օրէնսգրքի 148-րդ յօդւածից՝ Պետական դաւաճանութիւն է համարւում թշնամու կողմն անցնելը, կամ թշնամական գործունէութիւն իրականացնելու համար այլ օգնութիւն ցոյց տալը, որը կատարել է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին: ՀՀ քաղաքացի համարվող Նիկոլ Փաշինեանը որեւէ առիթ բաց չի թողնում թշնամու պահանջները հիմնաւորելու համար, աւելին՝ իր հրապարակային խօսոյթով հիմքեր է ստեղծում, որ Ադրբեջանը հիմքեր ունենայ ՀՀ-ի դէմ ռազմական ագրեսիա նախաձեռնելու համար: ՀՀ կառավարութեան աշխատակազմն այսօր եւս մէկ անգամ փաստել է, որ այս պահին չունեն որեւէ իրական հիմնաւորում Փաշինեանի հրապարակային խօսքերի համար:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԷԼԻՒՐԱ ՄՈՒԹԱՖԵԱՆՑԻ (ԱՂԱՅԵԱՆ)**

ցաւալի մահւան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, ապրիլի 5-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Հենրիկ Աղայեան՝ ամուսինը:

Միշէլ, Անիտա եւ Մինետա Աղայեաններ՝ որդին, հարսը եւ թոռը:

Ժորժ եւ Մեղեդի Աղայեաններ՝ որդին եւ հարսը:

Միշէլինա եւ Կարէն Մարգամեաններ՝ դուստրը եւ փեսան:

Էդվին Մութաֆեանց՝ եղբայրը:

Մութաֆեանց, Աղայեան, Աղախանեան, Եղնազարեան, Մարգամեան, Մկրտումեան, Փանոսեան, Բաղումեան եւ Սարվարեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:


سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
QeshmAir
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰





ԱԼԻՔ
Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ - ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir


## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Անհուն վշտով ցաւակցում ենք Հ. Մ. Ա. Կ.-ի Ուրմիոյ մասնաճիւղի վարչական անդամներ՝ Սեւան Այւազեանին, Վանէ Թահմազեանին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ԼՈՒՍՎԱՐԴ ԱՅՒԱԶԵԱՆԻ**

ցաւալի մահւան կապակցութեամբ:

**Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.**


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել
«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հեռախօսով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան



Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦


Ոսկեպարցիները՝ Փաշինեանին.

# «Կը տուժի սահմանամերձ 9 համայնք, կը կորցնենք Իջեւան-Նոյեմբերեան մայրուղին, հակառակորդի համար ազատ ճանապարհ կը բացուի դէպի Լոռի»

*Տաւուշի մարզի Ոսկեպար գիւղի բնակիչները ուղերձով դիմել են Նիկոլ Փաշինեանին.*

*«Մենք՝ ներքոստորագրեալներս, Տաւուշի մարզի սահմանապահ Ոսկեպար, գիւղի բնակիչներս, մեր խոր անհանգստութիւնն ենք յայտնում վերջերս ՀՀ կառավարութեան տարբեր ներկայացուցիչների կողմից, մասնաւորապէս նաեւ Ձեր կողմից մեր բնակավայրի յարակից տարածքների ադրբեջանական կողմին վերադարձնելու մասին յայտարարութիւնների կապակցութեամբ:*

*Նախ՝ մի քանի խօսք այն մասին, թէ ինչպէ՞ս է ստեղծուել այս իրավիճակը մեր տարածաշրջանում: Նախկին՝ խորհրդային պետութեան կողմից մեզ ժառանգութիւն թողնուած սահմանները դիտաւորեալ այնքան էին խճճուել ու խեղաթիւրուել, որ Հայաստանի մնացած բնակավայրերին կապող մեր ճանապարհները գտնւում էին ադրբեջանցիների հսկողութեան տակ: Վերջիններս ԽՍՀՄ փլուզումից անմիջապէս յետոյ սկսեցին մեր քաղաքացիների հանդէպ բռնութիւններն այդ ճանապարհահատուածներում, իսկ 1991 թւականից յետոյ սկսուեցին ՀՀ քաղաքացիների առեւանգումները: Այդ տարիներին մեր եւ հարեւան բնակավայրերից առեւանգուեցին մի քանի, իսկ ընդհանուր առմամբ՝ այդ ճանապարհահատուածներից գերեվարուեցին եւ անհետ կորան քառասունից աւելի ՀՀ քաղաքացիներ: 1991 թւականին հակառակորդի կողմից թալանուեցին, աւերուեցին, պայթեցուեցին Ոսկեպարի Ժամի Ձոր թաղամասի բոլոր տները, իսկ գիւղը գրեթէ մշտապէս ենթարկւում էր գնդակոծութեան ու հրետակոծութեան: Այդ ամէնից յետոյ միայն՝ մենք ելել ենք պայքարի ոչ թէ տարածքներ գրաւելու, այլ մեր ապրելու, ազատ տեղաշարժւելու իրաւունքը պաշտպանելու եւ նուաճելու: Շատ թանկ՝ զոհերի ու խեղուած կեանքերի գնով միայն 1992 թւականին մեզ դա յաջողուեց:*

*Այսօր, երբ պետութիւնների «տարածքային ամբողջականութեան» կեղծ թէգի տակ հրապարակի վրայ են այդ տարածքների վերադարձի մասին հրապարակային յայտարարութիւնները, ապա դա մեզ համար միանգամայն անընդունելի է: Իսկ ո՞ւր է մնում «Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրով» մեզ տրուած ազատ ապրելու եւ տեղաշարժւելու իրաւունքը: Նոյնիսկ այսօր, երբ հակառակորդի դիրքերից գտնւում ենք որոշակի հեռաւորութեան վրայ, պարբերաբար ենթարկւում ենք հակառակորդի ոտնձգութիւններին եւ մեր երկիրը չի կարող ապահովել մեր երեխաների անվտանգութիւնը, ի՞նչ կը լինի, երբ այդ տարածքները վերադարձուեն եւ թուրք տարրը յայտնուի մեր տներից 20-30 մետր, դպրոցից 100 մետր հեռաւորութեան վրայ, երբ մենք նորից կը յայտնուենք արտաքին աշխարհից մեկուսացած, թշնամական տարրով շրջապատուած վիճակում:*

*Միւս կողմից, եթէ խօսում ենք «տարածքային ամբողջականութեան» մասին, ապա արդեօք հակառակ կողմը պատրաստո՞ւմ է վերադարձնել հէնց մեր տարածքում Հայաստանի ինքնիշխան տարածքի իր հսկողութեան տակ գտնուող տարածքները՝ Բերքաբեր գիւղի մօտ 900 հեկտարը Ջողազի ջրամբարի ձախ ափին, Կոթիի 2-3 կմ.-անոց շերտով իրենց կողմից վերահսկուող սահմանակից տարածքները, էլ չխօսելով Արծւաշէնի եւ մնացած տարածքների մասին: Համոզուած ենք, որ հակառակորդը չի էլ մտածում այդ մասին:*

*Մենք չէ, որ պէտք է ՀՀ կառավարութեանը բացատրենք այս տարածքում սահմանների նոյնիսկ ամենափոքր յետքաշման ստրատեգիական նշանակութեան, պետական անվտանգութեան խաթարման մասին, բայց ստիպուած ենք շեշտել, որ սահմանի այս հատուածում տարածքային զիջման արդիւնքում կը տուժեն ոչ միայն սահմանամերձ Բերքաբեր, Սարիգիւղ, Ծաղկաւան, Կիրանց, Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեւան, Կոթի, Բարեկամաւան բնակավայրերը, այլ նաեւ Հայաստանը կը կորցնի Իջեւան-Նոյեմբերեան միջպետական մայրուղին, կը դատարկուեն նշուած բնակավայրերը, եւ հակառակորդի համար սարերով ազատ ճանապարհ կը բացուի դէպի Ալավերդի, Վանաձոր:*

*Միամտութիւն կը լինի կարծել, թէ յաջորդ քայլին հակառակորդը չի պահանջի յանձնել այսպէս կոչուած «անկլաւները», իսկ թէ ի՞նչ կը կատարուի մեր երկրի հետ դրանից յետոյ, նոյնիսկ սարսափելի է մտածել: Մեր ոչ բարով հարեւան երկրի նախագահի ամենօրեայ ելոյթներում լսում ենք պահանջատիրական աւելի մեծ նկրտումներ մեր երկրի նկատմամբ՝ Զանգեզուրի, Սեւանի, նոյնիսկ Երեւանի մասին: Դա նրանց վարքագիծն է. այստեղ յայտնուելուց յետոյ, ուրիշինը խլելու նրանց ցանկութիւնը երբեք չի մարելու: Նրանք յարգում են միայն ուժի իրաւունքը եւ խաղաղութիւն են կնքում միայն ուժեղի հետ: Եւ միջազգային ոչ մի իրաւունք, ոչ մի կառոյց չի կարող զսպել նրանց:*

*Ոսկեպարը եւ յարակից հայկական բնակավայրերը հազարամեայ պատմութիւն ունեն: Այստեղ մեր գիւղերը գոյութիւն ունեն առնուազն 4-րդ դարից եւ կարողացել են դարերի մաքառումների միջով հասնել 21-րդ դար եւ պէտք է յարատեւեն: Թուրք տարրը ընդամէնը 200 տարի առաջ է այստեղ յայտնուել եւ միշտ էլ ձգտել է մեզնից խլել այստեղ ապրելու մեր իրաւունքը, բայց դա նրան չի յաջողուել: Չի յաջողուել նաեւ 90-ականներին, չի յաջողուելու նաեւ այսօր: Դրա վկան մեր հազարամեայ մշակութային կառոյցներն են, բերդերն ու եկեղեցիները:*

*Վերջում ուզում ենք յոյս յայտնել, որ կանսաք մեր խօսքին եւ կը փորձէք այս տարածաշրջանում այլ լուծումներ գտնել, որոնք չեն լինի արդէն իսկ գոյութիւն ունեցող ամուր պաշտպանական գծերի զիջման, մեր բնակավայրերի բնակչութեան ապրելու եւ ազատ տեղաշարժւելու իրաւունքի ոտնահարման հաշւին:*

*Մենք՝ ներքոստորագրեալներս, մեր անհամաձայնութիւնն ենք յայտնում Ադրբեջանի կողմից ներկայացուող տարածքային պահանջների բաւարարմանը եւ սահմանի այս հատուածում տարածքային զիջումներին: Մենք պատրաստ ենք ամէն գնով պաշտպանել մեր ապրելու եւ ազատ տեղաշարժուելու իրաւունքը, լինել մեր բանակի կողքին, նրա շարքերում՝ ի շահ մեր հայրենիքի ու բնակավայրերի պաշտպանութեան»:*

**Tert.am**


مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir
دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4
نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77821769 • 021-77281288 • 021-77259537 • 09366955599
واتساپ اینستاگرام @Didarseiregity
دفتر ایروان
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237
Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով
دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարւայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով






## ՄԱՀԱԶԴ

***Կեանքի դառն հուսանքի մէջ***
***Ամէն մարդ էլ վիշտ ունի,***
***Բայց երանի այն մարդուն, որ***
***Համբերութեամբ կը տանի...***

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի, թանկագին եւ վաստակաշատ դաշնակահար՝



### ԷԼԻԱՆՈՐ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ (ԿԱՐԱՊԵՏԵԱՆ)

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ հինգշաբթի, մարտի 28-ին:

Թաղումը կը կատարուի հինգշաբթի, ապրիլի 4-ին, առ. ժամը 11:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 10:00-ին ներկայ գտնուել Մաջիդիէ, Երկրորդ 16-մետրանոց պող., Էլիասի փողոցին կից եւ Բահար Շիրազ պող., Ջոմհոռի փողոցին կից՝ գերեզմանատուն մեկնելու համար:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Մարինա, Քառլօ եւ Փաթրիկ Բեհզադեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռը:

Սեւան եւ Քամելիա Միրզայեաններ՝ որդին եւ հարսը:

Շարիս եւ Սասուն Խաչատրեաններ՝ թոռնուհին եւ իր ամուսինը:

Անժէլ Բախտամեան՝ քոյրը՝ ընտանեօք:

Համիկ Կարապետեան՝ եղբայրը՝ ընտանեօք:

Աստղիկ Բեհզադեան՝ խնամին՝ ընտանեօք:

Միրզայեան, Կարապետեան, Բեհզադեան, Անսարեան, Վարդերեսեան, Արմենակեան, Խաչատրեան, Բաբախանեան, Ռաթէոսեան, Եաւարեան եւ Սարհադեան ընտանիքներ՝ հարազատները:


املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی



«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388



Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES — QeshmAir
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


## Թուրքիան....

(Շար. 1-ին էջից)

*վերլուծել են խնդրի բնապահպանական, շրջակայ միջավայրի, սննդային անվտանգութեան, եւ աշխարհաքաղաքական հաւասարումների հնարաւոր փոփոխութեան խնդիրները:*

*Յօդւածում գիտաշխատողների այս խումբը կարեւորել է Արաքսի ջրային ռեսուրսների աւազանի նշանակութիւնը տարածաշրջանի երկրների համար, որպէս անդրսահմանային գետաւազան, յատկապէս, Կովկասեան տարածաշրջանում, որը բաժանւած է չորս ափամերձ երկրներ՝ Թուրքիայի, Հայաստանի, Իրանի եւ Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ:*

*Յօդւածի ներածութեան մէջ հեղինակները յիշեցրել են, որ թէեւ միջոցներ են ձեռնարկւել այս գետաւազանի երկրների միջեւ ջրային համագործակցութիւնը զարգացնելու ուղղութեամբ, այնուամենայնիւ Արեւելեան Անատոլիայի նախագիծը (DAP) եւ Թուրքիայի վարած հիդրոպոլիտիկ ուղղւածութիւնը թիրախաւորելով հարեւան երկրներին դառնալու են այն հիմնական գործօնները, որոնք շրջելու են աւազանի համագործակցային մթնոլորտը վտանգելով տարածաշրջանի տեւական կայունութիւնը:*

*Վերջին տասնամեակների ընթացքում Թուրքիան օգտագործել է անդրսահմանային ջրային ռեսուրսները՝ ամրապնդելու համար իր տնտեսական զարգացումը, միաժամանակ առաջ մղելով քաղաքական ռազմավարութիւնը հիդրոհեգեմոնիա ստեղծելով տարածաշրջանում:*

*Գիտաշխատողների այս խմբի համաձայն նախագծի իրականացումը տեւել է մի քանի տարի, եւ այդ ընթացքում բազմիցս հնչել են նախազգուշացնող կոչեր ու ահազանգեր, սակայն Արաքսի վերին հատւածի ջրային պաշարների կլանմանն ուղղւած Թուրքիայի նախագիծը համապատասխան ուշադրութեան չի արժանացել Իրանի հիդրոքաղաքական հաշւարկներում:*

*Ուսումնասիրութեան համար օգտագործւել են բոլոր այն աղբիւրները, որոնցում տեղ են գտել տարածաշրջանում ամբարտակների կառուցման Թուրքիայի ծրագրերն ու այդ ուղղութեամբ կատարւած գիտական հետաքննութիւնները: Օգտագործւել են նաեւ Իրանի ջրային ռեսուրսների վրայ հնարաւոր ազդեցութիւնների մասին ուսումնասիրութիւններն ու աղբիւրները, ներառեալ ամբարտակների կառուցումից յետոյ գրանցւած իրավիճակը:*

*Յօդւածը յիշեցրել է, որ Թուրքիան իր շրջանների զարգացման նպատակով անցել է Արաքսի վրայ մի շարք ամբարտակների կառուցմանը, եւ չի անդամակցում ջրի հետ կապւած կոնւենցիաներին, նոյնիսկ դէմ է արտայայտւել ՄԱԿ-ի 1997 թւականի կոնւենցիաներին (Համօգտագործւող ջրային ռեսուրսների շուրջ այսօրինակ վէճերը կառավարելու կամ լուծելու ուղիներից մէկը միջազգային օրէնքների եւ կոնւենցիաների օգտագործումն է, ներառեալ 1997 թւականի Միաւորւած ազգերի կազմակերպութեան միջազգային կոնւենցիան՝ոչ-նաւային նպատակներով):*

*Ուշագրաւ են նաեւ Իրանի «ՄԱՔՍ» ուսումնասիրութիւնների կենտրոնի գիտաշխատող, շրջակայ միջավայրի հարցերի փորձագէտ դոկտ. Մոհամմադ Սաբեր Բաղխանիփուրի տեսակէտները: Նրա արձանագրած փաստերի համաձայն, Թուրքիայի ջրամբարաշինութիւնը չի սահմանափակւում GAP-ով, այլ Թուրքիան 20 տարի առաջ է անցել ամբարտակաշինութեան իր 10 գերնախագծերի իրականացման աշխատանքներին, իսկ GAP-ի աւարտին կառուցւած ամբարտակներում Եփրատի ու Տիգրիսի տարողութիւնների 5 ապատիկը ջուր է կուտակւելու: Հետեւաբար՝ կասկածից վեր է, որ յիշեալ գետերի աւազանի ներքին երկրներում ջրային ռեսուրսների աղութեան հետ միասին առաջանալ փոշեհատիկների տարածման հետ կապւած ճգնաժամ:*

*Փորձագէտի հաւաստմամբ՝ Թուրքիան առանց թաքցնելու հետեւում է ջուրը, որպէս քաղաքական ու անվտանգային ճնշման միջոց օգտագործել հարեւան երկրների դէմ:*

Վարդան Ոսկանեան.

# «Դամասկոսում իրանական հիւպատոսութեան վրայ յարձակումն իրականացւել է Բաքւի հետ գաղտնի համակարգմամբ»

Իրանագէտ Վարդան Ոսկանեանն անդրադառնալով նախօրէին Իսրայէլի կողմից Դամասկոսում Իրանի հիւպատոսութեան վրայ յարձակմանը, գրել է.

«Իրանի Իսլամական յեղափոխութեան պահապանների կորպուսի հետ առնչութիւն ունեցող տելեգրամեան ալիքներում խօսք է գնում այն մասին, որ Դամասկոսում իրանական հիւպատոսութեան վրայ իսրայէլական օդային յարձակումն իրականացւել է Բաքւի բարբարոսական վարչախմբի հետ գաղտնի համակարգմամբ:

Ընդորում, որպէս իրանական պատասխան գործողութեան թիրախ են դիտարկւում նաեւ իրանական սահմանի մօտակայքում՝ բռնազաւթւած Արցախի Հանրապետութեան Կովսականի շրջանում, տեղակայւած իսրայէլական հետախուզական ենթակառուցւածքները:

Յիշեցնեմ, որ արհեստածին Ադրբեջանի տարածքում իսրայէլական դիւանագիտական ներկայացուցչութիւնը պատասխան հարւածի թիրախ դարձնելու կոչ էր արել Իրանի 11-րդ գումարման խորհրդարանի պատգամաւորներից մէկը»:

**Yerevan.today**


SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار مگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت


## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Արմոնդ Թահմազեանին, Թահմազեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

### ԱՐՇԱԼՈՅՍ ԹԱՀՄԱԶԵԱՆԻ

ցաւալի մահւան առթիւ:

**«ԱԼԻՔ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ**

## ՄԱՀԱԶԴ-ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Սգում ենք Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան Ուրմիոյ մասնաճիւղի անդամ՝



### ԱՆԻ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ մարտի 26-ին,:

Անհուն վշտով ցաւակցում ենք Սարգսեան, Օհանեան, Ասատրեան, Իւնան եւ Մկրտչեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի կապակցութեամբ:

**Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.**

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան կողմից ծաղկեպսակի փոխարէն 10.000.000 ռիալ նուիրում է Թ. Հ. Թ. Կարիքաւորներին օժանդակող մարմնին:

Գումարն ստանալ «Ալիք»-ից:


ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212


## Թեհրանը....

(Շար. 1-ին էջից)

*նաեւ՝ Դիւանագիտական յարաբերութիւնների մասին 1961 թւականի եւ Հիւպատոսական յարաբերութիւնների մասին 1963 թւականի Վիեննայի կոնւենցիան եւ, նաեւ, 1973 թւականի՝ Միջազգայնօրէն պաշտպանւած անձանց, այդ թւում՝ դիւանագիտական անձնակազմի դէմ յանցագործութիւնները կանխելու եւ պատժելու կոնւենցիան»:*